

12/02/2008
համար 44Ն

«ՆԵՐՂՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ,
ԴՐԱՆՑ ՍԱՀՄԱՆԱԶՈՓԵՐԸ, ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ, ՀԱՇՎԱՐԿՈՒՄ ՄԱՍՆԱԿՑՈՂ
ՏԱՐՐԵՐԻ ԿԱԶՄԸ, ՍԱՀՄԱՆԿԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ ԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ
ՉԱՓԸ»

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 4/02-Ը ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սույն կանոնակարգում ներառված է ՀՀ ԿԲ խորհրդի
28.07.09թ. թիվ 231-Ն, 10.01.12թ. թիվ 2 Ն, 27.11.12թ. թիվ 327 Ն որոշմամբ կատարված
փոփոխությունները

Կանոնակարգը փոփոխվել է՝

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը, «Իրավական ակտերի
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը և
«Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 2-
րդ մասի 6-րդ կետը, 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և 3-րդ մասը, 72-րդ և 73-րդ
հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Հաստատել «Ներդրումային ընկերությունների հիմնական տնտեսական նորմատիվները, դրանց սահմանաչափերը, հաշվարկման կարգը, հաշվարկում մասնակցող տարրերի կազմը, սահմանված տնտեսական նորմատիվների խախտումների չափը» կանոնակարգ 4/02-ը՝ համաձայն հավելվածի (կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2008 թվականի ապրիլի 1-ից, բացառությամբ սույն որոշմամբ հաստատված «Ներդրումային ընկերությունների հիմնական տնտեսական նորմատիվները, դրանց սահմանաչափերը, հաշվարկման կարգը, հաշվարկում մասնակցող տարրերի կազմը, սահմանված տնտեսական նորմատիվների խախտումների չափը» կանոնակարգ 4/02-ի 2-րդ գլխի 3-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում 2009 թվականի հունվարի 1-ից:
3. 2008 թվականի հունիսի 30-ից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մայիսի 15-ի ««Մասնագիտացված անձանց գործունեության տնտեսական նորմատիվները, դրանց սահմանաչափերը, հաշվարկման կարգը և հաշվարկում օգտագործվող մեծությունների կազմը» կանոնակարգ 42-ը հաստատելու մասին» թիվ 145Ն որոշումը:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ

Տիգրան Սարգսյան

Հավելված

Հաստատված է

Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկի խորհրդի
2009 թվականի հուլիսի 28-ի թիվ 231-Ն որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 4/02

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՍԱՀՄԱՆԱԶՈՓԵՐԸ, ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ, ՀԱՇՎԱՐԿՈՒՄ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՏԱՐԲԵՐԻ ԿԱԶՄԸ, ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՉԱՓԸ

ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կանոնակարգը սահմանում է ներդրումային ընկերությունների գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները, դրանց սահմանաչափերը, հաշվարկման կարգը, հաշվարկում մասնակցող տարրերի կազմը և սահմանված տնտեսական նորմատիվների խախտումների չափը, որի դեպքում ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիան կարող է ուժը կորցրած ճանաչվել, ինչպես նաև օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղերի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում ներդրումային ծառայությունների մատուցման լրացուցիչ պայմանները:

ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2. Սույն կանոնակարգում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

- 1) Կենտրոնական բանկ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,
- 2) ֆինանսական կազմակերպություն՝ Կենտրոնական բանկի կամ ֆինանսական ոլորտի կարգավորումն ու վերահսկողությունն իրականացնող օտարերկրյա մարմնի կողմից լիցենզավորվող և/կամ հաշվառվող (գրանցվող) իրավաբանական անձ,
- 3) ոչ բանկ կազմակերպություն՝ իրավաբանական անձ, բացառությամբ բանկի:
- 4) **թանկարժեք մետաղների ստանդարտացված ձուլակտոր՝** թանկարժեք մետաղների մասինն Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ստանդարտացված ձուլակտոր:

5) **հաշվային պլան**՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի նոյեմբերի 30-ի 322Ն որոշմամբ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 1032Ն հրամանով համատեղ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի կառավարիչների հաշվապահական հաշվառման հաշվային պլան»:

6) **ածանցյալ գործիքներ**՝ ֆորվարդը, ֆյուչերսը, օպցիոնը, սվոպը և Արժեթղթերի շուկայի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն այլ ածանցյալ գործիքները:

7) **հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններ**՝ ներդրումային ընկերության կողմից տրամադրված երաշխավորություններ:

8) **վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն**՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 5-ի թիվ 347Ն որոշմամբ հաստատված «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները», Կանոնակարգ 14-ով սահմանված վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն:

9) **հաշվեկշռային մնացորդ (արժեք)**՝ ակտիվի կամ պարտավորության գծով հաշվեկշռում հաշվեգրված գումարը՝ ներառյալ տոկոսները, տույժերը և տուգանքները՝ նվազեցրած դրա գծով ձևավորված հնարավոր պահուստը, կուտակված ամորտիզացիան և արժեզրկումը, եթե այդպիսիք կան:

(2-րդ կետը փոխվել է, լրացվել է 10.01.12թ. թիվ 2 Ն որոշմամբ, փոխվել է 27.11.12թ. թիվ 327 Ն որոշմամբ):

3. Սույն կանոնակարգում օգտագործվող այլ հասկացություններն ունեն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով նախատեսված իմաստները, եթե սույն կանոնակարգով դրանց վերաբերյալ այլ բան սահմանված չէ:

ԳԼՈՒԽ 3. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍԱՀՄԱՆԱԶԱՓԵՐԸ

4. Կենտրոնական բանկը ներդրումային ընկերությունների համար սահմանում է.
- 1) կանոնադրական կապիտալի և ընդհանուր կապիտալի նվազագույն չափերի նորմատիվը և
 - 2) ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև սահմանային հարաբերակցության Ն1 նորմատիվը:
5. Ներդրումային ընկերությունների համար ընդհանուր կապիտալի նվազագույն չափը սահմանվում է.
- 1) 20 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ, եթե ներդրումային ընկերությունն առանց տիրապետելու հաճախորդի միջոցներին (արժեթղթերին

և(կամ) դրամական միջոցներին) իրականացնում է հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունում և հաղորդում և(կամ) իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարման ծառայություն, և(կամ) մատուցում է արժեթղթերում ներդրումների հետ կապված հաճախորդներին խորհրդատվության տրամադրման ծառայություն,

- 2) 50 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ, եթե ներդրումային ընկերությունը տիրապետում է հաճախորդի միջոցներին (արժեթղթերին և(կամ) դրամական միջոցներին) և իրավունք ունի մատուցել հետևյալ ներդրումային ծառայություններից առնվազն մեկը.

ա. հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունում և հաղորդում,

բ. իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարում.

- 3) 50 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ, եթե ներդրումային ընկերությունը իրականացնում է արժեթղթերի փաթեթի կառավարում և(կամ) արժեթղթերի չերաշխավորված տեղաբաշխում,

- 4) 300 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ, եթե ներդրումային ընկերությունը արժեթղթերով գործարքներ է կատարում իր հաշվին և իր անունից, և(կամ) մատուցում է արժեթղթերի երաշխավորված տեղաբաշխման ծառայությունը, և(կամ) իրականացնում է արժեթղթերի պահառություն:

6. Սույն կանոնակարգի 5-րդ կետի իմաստով՝ ներդրումային ընկերությունը տիրապետում է հաճախորդի միջոցներին (արժեթղթերին և(կամ) դրամական միջոցներին), եթե այդ ընկերությունը հաճախորդի միջոցները պահում է իր հաշվում կամ փաստացի հնարավորություն ունի տիրապետել դրանք:

7. Ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը սահմանվում է 1 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ:

8. Սույն կանոնակարգի 5-րդ կետում նշված միաժամանակ տարբեր ենթակետերով սահմանված ծառայությունների մատուցման դեպքում ներդրումային ընկերության նկատմամբ կիրառվում է դրանցից յուրաքանչյուրի համար սահմանված ընդհանուր կապիտալի նորմատիվի այն նվազագույն չափը, որն ավելի խիստ է:

9. Ներդրումային ընկերության ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցությունը (Ն1 նորմատիվ) սահմանվում է 12 տոկոս:

10. Ներդրումային ընկերությունը, որը մատուցում է միայն արժեթղթերում ներդրումների հետ կապված հաճախորդներին խորհրդատվության տրամադրման ծառայությունը և (կամ) հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունում և հաղորդում առանց տիրապետելու հաճախորդի միջոցներին (արժեթղթերին և(կամ) դրամական միջոցներին), չի հաշվարկում Ն1 հիմնական տնտեսական նորմատիվը:

11. Ներդրումային ընկերությունը պետք է յուրաքանչյուր ամսվա միջին օրական հաշվարկով ապահովի կանոնադրական կապիտալի և ընդհանուր կապիտալի նվազագույն չափերը, Ն1 հիմնական տնտեսական նորմատիվը:

11.1 Օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի համար չեն սահմանվում տնտեսական նորմատիվներ:

(11 կետը լրացվել է 10.01.12թ. թիվ 2 Ն որոշմամբ):

12. Եթե ներդրումային ընկերությունն ունի դուստր ընկերություն, ապա Կենտրոնական բանկի կողմից սահմանվող հիմնական տնտեսական նորմատիվները կիրառվում են նաև ներդրումային ընկերության համախմբված հաշվետվությունների նկատմամբ:

ԳԼՈՒԽ 4. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՈՒՄ ՍԱՄՆԱԿՑՈՂ ՏԱՐԲԵՐԻ ԿԱԶՄԸ

13. Սույն կանոնակարգի 5-րդ կետով սահմանված՝ ընդհանուր կապիտալի նվազագույն չափի և Ն1 հիմնական տնտեսական նորմատիվի հաշվարկման համար ներդրումային ընկերության ընդհանուր կապիտալը նրա հիմնական (առաջնային) և լրացուցիչ (երկրորդային) կապիտալների հանրագումարն է՝ համապատասխան նվազեցումները կատարելուց հետո: Ընդ որում, ընդհանուր կապիտալի մեծությունը հաշվարկելիս լրացուցիչ կապիտալը ընդհանուր կապիտալի հաշվարկում ընդգրկվում է հիմնական կապիտալի (սույն գլխի 15-րդ կետի համաձայն կատարվող նվազեցումները հաշվի առած) առավելագույնը 50 %-ի չափով:

14. Ներդրումային ընկերության հիմնական կապիտալը հետևյալ տարրերի հանրագումարի և հիմնական կապիտալի մեծությունից նվազեցվող տարրերի տարբերությունն է՝

- 1) հաշվային պլանի 50-րդ բաժնում հաշվառվող կանոնադրական կապիտալ (կանոնադրական հիմնադրամ),
- 2) չբաշխված շահույթ (վնաս),
- 3) գլխավոր պահուստ:

(14-րդ կետը փոխվել է 10.01.12թ. թիվ 2 Ն որոշմամբ):

15. Հիմնական կապիտալի մեծությունից նվազեցվող տարրերն են.

1) ոչ նյութական ակտիվների (այդ թվում՝ շահագործումից դուրս), ինչպես նաև ոչ նյութական ակտիվների վրա կատարված կապիտալ ներդրումների հաշվեկշռային արժեքը (բացառությամբ՝ ներդրումային ընկերության կողմից ներդրումային ծառայությունների ընթացքում օգտագործվող համակարգչային ծրագրերի և դրանց օգտագործման իրավունքների վճարումների, ՍիԲիԷՆԵթ, Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի հաշվարկային համակարգի և Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությամբ՝ նաև այլ վճարահաշվարկային համակարգերի (այդ թվում՝

ներդրումային ընկերության օտարերկրյա մասնաճյուղերի կողմից օգտագործվող օտարերկրյա վճարահաշվարկային համակարգերից) օգտվելու իրավունք տվող վճարումների չափով),

2) հաշվային պլանի 51-րդ բաժնում հաշվառվող հետ գնված և չվճարված կապիտալը,

3) ներդրումային ընկերության սեփականությունը հանդիսացող և ներդրումային ծառայությունների համար չօգտագործվող նյութական ակտիվների (հիմնական միջոցների և այլ նյութական ակտիվների, այդ թվում՝ գրավի տնօրինման արդյունքում կամ այլ պահանջներից առաջացած սեփականացված ակտիվների, շահագործումից դուրս այլ հիմնական միջոցների, ինչպես նաև ներդրումային ծառայությունների համար չօգտագործվող հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ ներդրումների) հաշվեկշռային արժեքը՝ այդ ակտիվները օրենքով սահմանված կարգով ներդրումային ընկերության սեփականությունը համարվելու օրվանից վեց ամիս հետո,

4) ներդրումային ընկերության սեփականությունը հանդիսացող և ներդրումային ծառայությունների համար օգտագործվող նյութական ակտիվների (հիմնական միջոցների, այդ թվում՝ անշարժ գույքի (շենքերի և շինությունների), այլ հիմնական միջոցների, ինչպես նաև ներդրումային ընկերության գործունեության համար օգտագործվող հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ ներդրումների) արժեքը՝ հիմնական կապիտալի հաշվեկշռային մեծության 25 տոկոսը գերազանցող գումարի չափով: Սույն ենթակետի իմաստով՝ նյութական ակտիվի արժեքը հավասար է նյութական ակտիվի սկզբնական արժեքի և կապիտալ ներդրումների հանրագումարին՝ նվազեցված դրանց գծով կատարված ամորտիզացիոն հատկացումների, արժեզրկումից և վերագնահատումից կորուստների չափով:

5) ներդրումային ընկերության վարձակալած հիմնական միջոցի բարելավմանն ուղղված կապիտալ ներդրումների հաշվեկշռային մնացորդը,

6) այլ ֆինանսական կազմակերպությունների (այդ թվում՝ ներդրումային ընկերությունների) կանոնադրական կապիտալում իրականացված ներդրումների հաշվեկշռային արժեքը, եթե

ա. ներդրումը կազմում է տվյալ անձի կանոնադրական կապիտալի 10 տոկոսը կամ ավելին, կամ

բ. ներդրումը փոքր է տվյալ անձի կանոնադրական կապիտալի 10 տոկոսից, սակայն գերազանցում է ներդրումային ընկերության հիմնական կապիտալի հաշվեկշռային մեծության 15 տոկոսը, կամ

գ. բոլոր անձանց կանոնադրական կապիտալներում ներդրումները գերազանցում են ներդրումային ընկերության հիմնական կապիտալի հաշվեկշռային մեծության 60 տոկոսը:

(15-րդ կետը փոխվել է 10.01.12թ. թիվ 2 Ն, 27.11.12թ. թիվ 327 Ն որոշումներով):

16. Ներդրումային ընկերության լրացուցիչ կապիտալը բաղկացած է.

1) ներդրումային ընկերության սեփականությունը հանդիսացող և ներդրումային ընկերության կողմից ծառայությունների մատուցման համար օգտագործվող նյութական ակտիվների վերագնահատումից աճից,

2) արտերկրյա գործառնության վերահաշվարկից փոխարժեքային տարբերություններից,

3) հաշվային պլանի 52-րդ բաժնում հաշվառվող այլ համապարփակ եկամտի այլ տարրերից:

(16-րդ կետը փոխվել է 10.01.12թ. թիվ 2 Ն որոշմամբ):

17. Լրացուցիչ կապիտալի հաշվարկում չեն ընդգրկվում ներդրումային ընկերությունների կողմից ծառայությունների մատուցման համար չօգտագործվող նյութական ակտիվների, հիմնական կապիտալի մեծությունից պակասեցվող նյութական և ոչ նյութական ակտիվների՝ այլ համապարփակ եկամտի տարր հանդիսացող վերագնահատումից աճը (եկամուտը, շահույթը/վնասը):

(17-րդ կետը փոխվել է 10.01.12թ. թիվ 2 Ն որոշմամբ):

18. Սույն կանոնակարգի իմաստով ծառայությունների մատուցման համար օգտագործվող նյութական ակտիվներ են համարվում այն ակտիվները, որոնք ներդրումային ընկերության կողմից օգտագործվում են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ներդրումային և (կամ) ոչ հիմնական ծառայություններ մատուցելու համար: Ընդ որում, ներդրումային և (կամ) ոչ հիմնական ծառայությունների մատուցման համար օգտագործվող սեփական շենքեր և շինություններ (անշարժ գույք) են համարվում այն նյութական ակտիվները, որտեղ ներդրումային ընկերությունները և (կամ) նրանց մասնաճյուղերը մատուցում են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ներդրումային և (կամ) ոչ հիմնական ծառայություններ, ինչպես նաև այն շենքերը և շինությունները, որոնք զբաղեցված են ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կողմից:

(18-րդ կետը փոխվել է 10.01.12թ. թիվ 2 Ն որոշմամբ):

19. Ներդրումային ընկերության ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցությունը որոշվում է

Կ_{ընդ}

Ն1= ----- բանաձևով,

ՌԿԱ

որտեղ՝

Կ_{ընդ} - ընդհանուր կապիտալն է՝ ամսվա միջին օրական հաշվարկով,

$\Omega_{\text{ԿԱ}} = \nu_{\Omega} + 25/3(\mathcal{C}\Omega + \mathcal{Q}\Omega)$, որտեղ՝

ν_{Ω} -վարկային ռիսկն է՝ հաշվարկված համաձայն սույն կանոնակարգի հավելված 1-ի, $\mathcal{C}\Omega$ -շուկայական ռիսկն է՝ հաշվարկված համաձայն սույն կանոնակարգի հավելված 2-ի և $\mathcal{Q}\Omega$ -գործառնական ռիսկն է՝ հաշվարկված համաձայն սույն կանոնակարգի հավելված 3-ի:

ԳԼՈՒԽ 5. ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՉԱՓԸ, ՈՐԻ ԴԵՊԸՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՏՈՒՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆ ԿԱՐՈՂ Է ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉՎԵԼ

20. Ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիան ուժը կորցրած ճանաչելը, որպես պատասխանատվության միջոց, կարող է կիրառվել ներդրումային ընկերության տնտեսական նորմատիվը (նորմատիվները) սահմանված չափերից 10 և ավելի տոկոս նվազման դեպքում:

ԳԼՈՒԽ 6. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՍԱՄՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՏՈՒՑՄԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 7. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

(6-րդ եւ 7-րդ գլուխները ուժը կորցրել են 10.01.12թ. թիվ 2 Ն որոշմամբ):

Հավելված 1

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2009 թվականի հուլիսի 28-ի թիվ 231-Ն որոշմամբ հաստատված Կանոնակարգ 4/02-ի

ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿԻ ՀԱՇՎԱՐԿ

ԳԼՈՒԽ 1. Վարկային ռիսկի հաշվարկ

1. Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև սահմանային հարաբերակցության՝ Ն1 նորմատիվի հաշվարկում ընդգրկելու նպատակով վարկային ռիսկը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ՎՌ = (ՎՌ_1 + ՎՌ_2 + \dots + ՎՌ_n) / Ն,$$

որտեղ՝

ՎՌ - վարկային ռիսկն է՝ ամսվա միջին օրական հաշվարկով,

ՎՌ₁, ՎՌ₂, ..., ՎՌ_n - վարկային ռիսկն է՝ ըստ օրերի,

Ն - հաշվետու ամսվա օրերի թիվն է:

2. Վարկային ռիսկը հաշվարկելիս հաշվի են առնվում ներդրումային ընկերության ակտիվները բացառությամբ սույն կանոնակարգի 15-րդ կետի համաձայն՝ ներդրումային ընկերության հիմնական կապիտալից նվազեցվող ակտիվների, հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունները և հետհաշվեկշռային ածանցյալ գործիքները:

(2-րդ կետը փոխվել է 10.01.12թ. թիվ 2 Ն որոշմամբ):

3. (3-րդ կետը ուժը կորցրած է ճանաչվել 10.01.12թ. թիվ 2 Ն որոշմամբ):

4. Վարկային ռիսկը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ՎՌ = Ա_1 * Ռ_1 + Ա_2 * Ռ_2 + \dots + Ա_n * Ռ_n, \text{ որտեղ՝}$$

Ա₁, Ա₂, ..., Ա_n-ը ներդրումային ընկերությունների ակտիվների (բացառությամբ այն ակտիվների, որոնք նվազեցվում են հիմնական կապիտալից), հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների և հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների հանրագումարն են՝ խմբավորված ըստ ռիսկի միևնույն կշիռների: Ակտիվները ներառվում են իրենց հաշվեկշռային արժեքով, իսկ սույն հավելվածով սահմանված կարգով ՎՌԶՄ կիրառելու դեպքում՝ ՎՌԶՄ ճշգրտված արժեքով: Հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունները և հետհաշվեկշռային ածանցյալ գործիքները վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվում են սույն հավելվածի 14-րդ կետով սահմանված չափով:

Ռ₁, Ռ₂, ..., Ռ_n-ը համապատասխան ակտիվների ռիսկի կշիռներն են:

(4-րդ կետը փոխվել է 10.01.12թ. թիվ 2 Ն, 27.11.12թ. թիվ 327 Ն որոշումներով):

5. Վարկային ռիսկի հաշվարկման ընթացքում ներդրումային ընկերությունները կիրառում են սույն հավելվածի 3-րդ գլխով սահմանված վարկային ռիսկի գսպման մեխանիզմները (այսուհետև՝ ՎՌ-ԶՄ)

ԳԼՈՒԽ 2. Վարկային ռիսկի հաշվարկում օգտագործվող ռիսկի կշիռներ

Աղյուսակ 1

| ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՌԻՍԿԻ ԿՇԻՌՆԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿ | | |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---------------------------------|--------------------------------------|
| Ակտիվների տեսակները | Ռիսկի կշիռներ (տոկոս) | |
| | <i>դրամային ակտիվների համար</i> | <i>արտարժութային ակտիվների համար</i> |
| 1. Կանխիկ դրամական միջոցներ (Հայաստանի Հանրապետության դրամով և առաջին խմբի մեջ մտնող արտարժույթներով, ռուսական ռուբլով), ինչպես նաև Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությամբ՝ կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթեր (Հայաստանի Հանրապետության դրամով և առաջին խմբի մեջ մտնող արտարժույթներով, ռուսական ռուբլով) | 0 | 0 |
| 2. Տվյալ ներդրումային ընկերությունում պահվող (ներառյալ՝ տվյալ ներդրումային ընկերության դեպոզիտային հաշիվներում հաշվառվող) բանկային ոսկի | 0 | - |
| 3. Կենտրոնական բանկում բացված կանոնադրական կապիտալի համալրման կուտակային հաշվի մնացորդներ, այլ պահանջներ Կենտրոնական բանկի նկատմամբ | 0 | 0 |

| | | |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----------|----------|
| <p>4. Հայաստանի Հանրապետության դրամով Կենտրոնական բանկի կողմից թողարկված արժեթղթեր, Հայաստանի Հանրապետության պետական գանձապետական պարտատոմսեր</p> | <p>0</p> | <p>-</p> |
| <p>5. Հայաստանի Հանրապետության Կառավարության նկատմամբ պահանջներ՝ հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված հարկային պարտավորությունների կանխավճարների գծով</p> | <p>0</p> | <p>-</p> |
| <p>6. Տվյալ ներդրումային ընկերությունում պահվող (ներառյալ՝ տվյալ ներդրումային ընկերության դեպոզիտային հաշիվներում հաշվառվող)՝ բանկային ոսկով, Հայաստանի Հանրապետության դրամով, առաջին խմբի մեջ մտնող արտարժույթային միջոցներով, ինչպես նաև այլ արտարժույթային միջոցներով (եթե վերջիններս հանդիսանում են միևնույն արտարժույթով արտահայտված ակտիվների ապահովում) ապահովված պահանջներ</p> | <p>0</p> | <p>0</p> |
| <p>7. Պահանջներ Արժույթի միջազգային հիմնադրամի, Համաշխարհային բանկի, Եվրոպական կենտրոնական բանկի, Եվրոպական վերակառուցման և զարգացման բանկի, Ասիական զարգացման բանկի, Աֆրիկյան</p> | <p>0</p> | |

| | | |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----|----|
| <p>զարգացման բանկի, Միջամերիկյան զարգացման բանկի, Եվրոպական ներդրումային բանկի, Եվրոպական ներդրումային հիմնադրամի, Սկանդինավյան ներդրումային բանկի, Կարիբյան զարգացման բանկի, Իսլամական զարգացման բանկի և Եվրոպական զարգացման բանկի խորհրդի նկատմամբ</p> | | 0 |
| <p>8. Արտարժույթով Կենտրոնական բանկի կողմից թողարկված արժեթղթեր, Հայաստանի Հանրապետության պետական գանձապետական պարտատոմսեր</p> | - | 10 |
| <p>9. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից թողարկված փոխանցելի մուրհակներ, որոնց մինչև մարումն ընկած ժամանակահատվածը մինչև 1 տարի է և որոնք ենթակա են պարտադիր վճարման Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության գանձապետական միասնական հաշվի միջոցներից</p> | 10 | 10 |
| <p>10. Վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպությունների կողմից թողարկված</p> | 10 | - |

| | | |
|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------------------|------------------------------------------------------------|
| պարտատոմսեր | | |
| 11. Դատական ակտերի հիման վրա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից բռնագանձման ենթակա գումարների դիմաց փոխանցելի Հայաստանի Հանրապետության պետական մուրհակներ | 20 | 20 |
| 12. Ճանապարհին գտնվող կանխիկ դրամական միջոցներ (Հայաստանի Հանրապետության դրամով և առաջին խմբի մեջ մտնող արտարժույթներով), բանկային ոսկի, ինչպես նաև ճանապարհին գտնվող՝ Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությամբ կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթեր (Հայաստանի Հանրապետության դրամով և առաջին խմբի մեջ մտնող արտարժույթներով) | 20 | 20 |
| Բանկային հաշիվներ (այդ թվում՝ անկանխիկ ոսկով) Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում և օտարերկրյա բանկերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերում | 20 | 30 |
| 13. Պահանջներ օտարերկրյա կառավարությունների և դրանց կենտրոնական բանկերի նկատմամբ | /ԱԱԱ/Աաա/-ից 0 /Ա+/Ա1/-ից 20 /ԲԲԲ+/Բաա1/-ից 50 /Բաա3/ 50 /ԲԲ+/Բա1/-ից 100 | /ԱԱ-/Աա3/ 0 /Ա-/Ա3/ 20 /ԲԲԲ-/ 50 /ԲԲ+/Բա1/-ից 100 |

| | | |
|--------------------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| | /(Բ-)-ից ցածր/(Բ3)-ից ցածր/ 150 վարկանիշ չունեցող 100 | /(Բ-)-ից ցածր/(Բ3)-ից ցածր/ 150 վարկանիշ չունեցող 100 |
| 14. Պահանջներ օտարերկրյա տեղական կառավարման մարմինների նկատմամբ | /ԱԱԱ/Աաա/-ից /ԱԱ-/Աա3/ 20 /Ա+/Ա1/-ից /ԲԲԲ-/Բաա3/ 50 /ԲԲ+/Բա1/-ից /Բ-/Բ3/ 100 /(Բ-)-ից ցածր/(Բ3)-ից ցածր/ 150 վարկանիշ չունեցող 100 | /ԱԱԱ/Աաա/-ից /ԱԱ-/ Աա3/ 20 /Ա+/Ա1/-ից /ԲԲԲ-/ Բաա3/ 50 /ԲԲ+/Բա1/-ից /Բ-/Բ3/ 100 /(Բ-)-ից ցածր/(Բ3)-ից ցածր/ 150 վարկանիշ չունեցող 100 |
| 15. Կարճաժամկետ պահանջներ օտարերկրյա ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | /Ա-1+,Ա-1/Ֆ1+,Ֆ1/Պ-1/ 20 /Ա-2/Ֆ2/Պ-2/ 50 /Ա-3/Ֆ3/Պ-3/ 100 /Ա-3-ից ցածր/Ֆ3-ից ցածր/ՆՊ/ 150 վարկանիշ չունեցող 100 | /Ա-1+,Ա-1/Ֆ1+,Ֆ1/Պ-1/ 20 /Ա-2/Ֆ2/Պ-2/ 50 /Ա-3/Ֆ3/Պ-3/ 100 /Ա-3-ից ցածր/Ֆ3-ից ցածր/ՆՊ/ 150 վարկանիշ չունեցող 100 |
| 16. Երկարաժամկետ պահանջներ օտարերկրյա ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | /ԱԱԱ/Աաա/-ից /ԱԱ-/Աա3/ 20 /Ա+/Ա1/-ից /ԲԲԲ-/Բաա3/ 50 /ԲԲ+/Բա1/-ից /Բ-/Բ3/ 100 /(Բ-)-ից ցածր/(Բ3)-ից ցածր/ 150 վարկանիշ չունեցող 100 | /ԱԱԱ/Աաա/-ից /ԱԱ-/ Աա3/ 20 /Ա+/Ա1/-ից /ԲԲԲ-/ Բաա3/ 50 /ԲԲ+/Բա1/-ից /Բ-/Բ3/ 100 /(Բ-)-ից ցածր/(Բ3)-ից ցածր/ 150 վարկանիշ չունեցող 100 |
| 17. Կենտրոնական բանկի կողմից վարկանիշ ստացած կազմակերպությունների նկատմամբ պահանջներ | «Ա+»-ից 20 «Գ+»-ից 50 «Դ+»-ից 100 «Ե+»-ից 150 | «Բ-» 30 «Գ-» 75 «Դ-» 150 «Զ» 225 |

| | | |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| <p>18. Կարճաժամկետ պահանջներ օտարերկրյա ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ</p> | <p>/Ա-1+,Ա-1/Ֆ1+,Ֆ1/Պ-1/ 20 /Ա-2/Ֆ2/Պ-2/ 50 /Ա-3/Ֆ3/Պ-3/ 100 /Ա-3-ից ցածր/Ֆ3-ից ցածր/ՆՊ/ 150 վարկանիշ չունեցող 100</p> | <p>/Ա-1+,Ա-1/Ֆ1+,Ֆ1/Պ-1/ 20 /Ա-2/Ֆ2/Պ-2/ 50 /Ա-3/Ֆ3/Պ-3/ 100 /Ա-3-ից ցածր/Ֆ3-ից ցածր/ՆՊ/ 150 վարկանիշ չունեցող 100</p> |
| <p>19. Երկարաժամկետ պահանջներ օտարերկրյա ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ</p> | <p>/ԱԱԱ/Աաա/-ից /ԱԱ-/Աա3/ 20 /Ա+/Ա1/-ից /Ա-/Ա3/ 50 /ԲԲԲ+/Բաա1/-ից /ԲԲ-/Բա3/ 100 /(ԲԲ-)-ից ցածր/(Բա3)-ից ցածր/ 150 վարկանիշ չունեցող 100</p> | <p>/ԱԱԱ/Աաա/-ից /ԱԱ-/Աա3/ 20 /Ա+/Ա1/-ից /Ա-/Ա3/ 50 /ԲԲԲ+/Բաա1/-ից /ԲԲ-/Բա3/ 100 /(ԲԲ-)-ից ցածր/(Բա3)-ից ցածր/ 150 վարկանիշ չունեցող 100</p> |
| <p>20. Ոսկու ստանդարտացված ձուլակտորներ (999 հարգից ոչ պակաս)</p> | <p>--</p> | <p>50</p> |
| <p>21. Ճանապարհին գտնվող ոսկու ստանդարտացված ձուլակտորներ (999 հարգից ոչ պակաս)</p> | <p>-</p> | <p>75</p> |
| <p>22. Այլ պահանջներ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների և օտարերկրյա բանկերի և օտարերկրյա այլ ֆինանսական կազմակերպությունների՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերի նկատմամբ</p> | <p>50</p> | <p>75</p> |
| <p>23. Կանխիկ դրամական միջոցներ (երկրորդ խմբի մեջ մտնող արտարժույթներով,</p> | <p>-</p> | <p>100</p> |

| | | |
|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------|------------|
| <p>բացառությամբ ռուսական ռուբլու), Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությամբ՝ կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթեր (երկրորդ խմբի մեջ մտնող արտարժույթներով, բացառությամբ ռուսական ռուբլու)</p> | | |
| <p>24. Ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ պահանջներ, հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններ, որոնց գծով բավարարված են սույն կետով նախատեսված պայմանները միաժամանակ.</p> <p>1) փոխառուի և նրա հետ փոխկապակցված անձանց նկատմամբ պահանջների և հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների հանրագումարը չի գերազանցում 5 մլն Հայաստանի Հանրապետության դրամը,</p> <p>2) փոխառուի և նրա հետ փոխկապակցված անձանց նկատմամբ սույն կետի 1-ին ենթակետին բավարարող պահանջների, հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների հանրագումարը չի գերազանցում 1-ին ենթակետով սահմանված մեծությունների հանրագումարի 0.2%-ը:</p> | <p>75</p> | <p>110</p> |
| <p>25. Պահանջներ Հայաստանի Հանրապետության</p> | <p>100</p> | <p>150</p> |

| | | |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| համայնքների նկատմամբ | | |
| 26. Դատարանի վճռով ստեղծված կամ արգելադրված միջոցներ, | 100 | 150 |
| 27. Հայաստանի Հանրապետության Կառավարության նկատմամբ պահանջներ հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված հարկային պարտավորություններից ավելի վճարված գումարների (գերավճարների) գծով | 100 | - |
| 28. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ հաշվեկշռային արժեքով | 100 | - |
| 29. Պահանջներ ներդրումային ֆոնդերի նկատմամբ (վարկանիշի առկայության դեպքում) | /ԱԱԱ/Աաա/-ից /ԱԱ-/Աա3/ 20 /Ա+/Ա1/-ից /Ա-/Ա3 50 /ԲԲԲ+/Բաա1/-ից /ԲԲԲ-/Բաա3/ 100 /ԲԲ+/Բա1/-ից /ԲԲ-/Բա3/ 100 /Բ+/Բ1/-ից ցածր 150 /Ֆ1+, Ֆ1/Պ-1/Ա-1+, Ա-1/ 20 /Ֆ2/Պ-2/Ա-2/ 50 /Ֆ3և ցածր/Պ-3/Ա-3-ից ցածր / 100 | /ԱԱԱ/Աաա/-ից /ԱԱ- /Աա3/ 20 /Ա+/Ա1/-ից /Ա-/Ա3 50 /ԲԲԲ+/Բաա1/-ից /ԲԲԲ- /Բաա3/ 100 /ԲԲ+/Բա1/-ից /ԲԲ- /Բա3/ 100 /Բ+/Բ1/-ից ցածր 150 /Ֆ1+, Ֆ1/Պ-1/Ա-1+, Ա-1/ 20 /Ֆ2/Պ-2/Ա-2/ 50 /Ֆ3և ցածր/Պ-3/Ա-3-ից ցածր / 100 |
| 30. Պահանջներ ոչ բարձր ռիսկային ոչ օտարերկրյա ֆոնդերի նկատմամբ (վարկանիշի բացակայության դեպքում) | Համաձայն սույն հավելվածի 9.2-րդ կետի | Համաձայն սույն հավելվածի 9.2-րդ կետի |
| 31. Պահանջներ բարձր ռիսկային ոչ օտարերկրյա ֆոնդերի նկատմամբ (վարկանիշի | 150 | 150 |

| | | |
|----------------------------------------------------------------------------------------------------------------|--------------------------------------|--------------------------------------|
| բացակայության դեպքում) | | |
| 32. Պահանջներ օտարերկրյա ֆոնդերի նկատմամբ (վարկանիշի բացակայության դեպքում) | Համաձայն սույն հավելվածի 9.3-րդ կետի | Համաձայն սույն հավելվածի 9.3-րդ կետի |
| 33.23-րդ կետում նշված ակտիվներից տարբեր այլ ակտիվներ երկրորդ խմբի արտարժույթով (բացառությամբ ռուսական ռուբլու) | - | 150 |
| 34. Բոլոր այն հաշվեկշռային ակտիվները, որոնք ընդգրկված չեն սույն աղյուսակի այլ կետերում | 100 | 150 |

(Աղյուսակ 1-ը փոխվել է, լրացվել է 10.01.12թ. թիվ 2 Ն որոշմամբ, որից հետո շարադրվել է նոր խմբագրությամբ 27.11.12թ. թիվ 327 Ն որոշմամբ):

6. Սույն Հավելվածի աղյուսակ 1-ով սահմանված ակտիվները հաշվարկին մասնակցում են հաշվեկշռային արժեքով: Հաշվեկշռային ածանցյալ գործիքների ռիսկով կշռման համար հիմք է ընդունվում ակտիվում դրանց հաշվեկշռային արժեքը:

(6-րդ կետը փոխվել է 10.01.12թ. թիվ 2 Ն, 27.11.12թ. թիվ 327 Ն որոշումներով):

7. (7-րդ կետը փոխվել է 10.01.12թ. թիվ 2 Ն որոշմամբ, որից հետո ուժը կորցրել է 27.11.12թ. թիվ 327 Ն որոշմամբ):

8. Ներդրումային ընկերությունները բոլոր ոչ ֆինանսական կազմակերպությունների (այդ թվում՝ Կենտրոնական բանկից վարկանիշ ստացած ոչ ֆինանսական կազմակերպությունների) նկատմամբ պահանջները կարող են կշռել յուրաքանչյուր ակտիվի նկատմամբ սույն Հավելվածի Աղյուսակ 1-ով համապատասխան արժույթի համար սահմանված «վարկանիշ չունեցող» ակտիվին համապատասխանող ռիսկի կշռով՝ հաշվի չառնելով վերջիններիս անհատական վարկանիշերը: Նման մոտեցման կիրառման դեպքում ներդրումային ընկերությունները տարին մեկ անգամ ընտրում են սույն կետում նշված մոտեցումը, որով պետք է առաջնորդվեն և տեղեկացնում են այդ մասին Կենտրոնական բանկին՝ մինչև յուրաքանչյուր տարվան նախորդող տարվա դեկտեմբերի 31-ը:

(8-րդ կետը փոխվել է 10.01.12թ. թիվ 2 Ն որոշմամբ):

9. Եթե միևնույն պահանջը սույն հավելվածի աղյուսակի 1-ի համաձայն ռիսկով կշռելիս ստանում է մեկից ավելի ռիսկի կշիռներ, ներդրումային ընկերությունը պետք է ընտրի ամենացածր ռիսկի կշիռը՝ բացառությամբ հետևյալ դեպքերի.

1) այն դեպքում, երբ պահանջը միաժամանակ բավարարում է սույն հավելվածի աղյուսակ 1-ի 26-րդ կետին և աղյուսակ 1-ով սահմանված այլ ռիսկի կշիռներին, ապա վարկային ռիսկի հաշվարկում նման պահանջը պետք է ընդգրկել 100 տոկոս ռիսկի կշիռով,

2) այն դեպքում, երբ դատարանի որոշմամբ սառեցված կամ կալանված պահանջները, համաձայն սույն հավելվածի աղյուսակ 1-ի 155-19-րդ կետերի, ստանում են 150 տոկոս ռիսկի կշիռը, ապա վարկային ռիսկի հաշվարկում նման պահանջները պետք է ընդգրկել 150 տոկոս ռիսկի կշիռով:

3) երկրորդ խմբի արտարժույթով (բացառությամբ ռուսական ռուբլու) արտահայտված ակտիվները կշռվում են այդ ակտիվների համար սահմանված ամենաբարձր ռիսկի կշռով:

4) Ռեպո համաձայնագրերը, ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթերը, փոխառությամբ տրամադրված արժեթղթերը և դրանց գծով հաշվարկված տոկոսները վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվում են համաձայն սույն հավելվածի 3-րդ գլխի պահանջների:

5) Աղյուսակ 1-ի 33-րդ կետում նշված ակտիվները կշռվում են այդ ակտիվների համար սահմանված ամենաբարձր ռիսկի կշռով:

(9-րդ կետը փոխվել է, լրացվել է 27.11.12թ. թիվ 327 Ն որոշմամբ):

9.1 Սույն հավելվածի աղյուսակ 1-ի 31-րդ կետում նշված բարձր ռիսկային ֆոնդեր են համարվում «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված մասնագիտացված ֆոնդերը, բացառությամբ ֆոնդերի ֆոնդի, անշարժ գույքի ֆոնդի, ինչպես նաև ոչ հրապարակային ֆոնդերը: Սույն հավելվածի աղյուսակ 1-ի 30-րդ կետում նշված ոչ բարձր ռիսկային ֆոնդեր են համարվում բարձր ռիսկային ֆոնդեր չհամարվող ֆոնդերը:

9.2 Սույն հավելվածի աղյուսակ 1-ի 30-րդ կետում նշված վարկանիշ չունեցող ոչ բարձր ռիսկային ոչ օտարերկրյա ֆոնդերի նկատմամբ պահանջի ռիսկի կշիռը որոշելու համար պետք է հաշվարկել տվյալ ֆոնդի ակտիվներին տրված ռիսկի կշիռների միջին կշռված մեծությունը, որի հաշվակման համար հիմք է ընդունվում ֆոնդի կառավարչի կողմից հաշվարկման պահի դրությամբ բացահայտված (տրամադրված) ֆոնդի ակտիվների ընդհանուր ծավալի (խմբավորված ըստ ռիսկի կշիռների) վերաբերյալ տեղեկատվությունը, եթե տվյալ տեղեկատվությունը բացահայտվել (տրամադրվել) է ոչ շուտ, քան կապիտալի համարժեքության նորմատիվի հաշվարկման ամսվան նախորդող երկու ամսվա ընթացքում: Եթե սույն կետով սահմանված տեղեկատվությունը բացահայտվել (տրամադրվել) է ավելի շուտ, քան կապիտալի համարժեքության նորմատիվի հաշվարկման ամսվան նախորդող երկու ամսվա ընթացքում կամ չի բացահայտվել (տրամադրվել), ապա սույն հավելվածի աղյուսակ 1-ի 30-րդ կետում նշված վարկանիշ չունեցող ոչ բարձր ռիսկային ոչ օտարերկրյա ֆոնդերի նկատմամբ պահանջի ռիսկի կշիռը ընդունվում է 100%:

9.3 Սույն հավելվածի աղյուսակ 1-ի 32-րդ կետում նշված վարկանիշ չունեցող օտարերկրյա ֆոնդերի նկատմամբ պահանջի ռիսկի կշիռը որոշվում է աղյուսակ 1.1-ի համաձայն: Ընդ որում՝ սույն կետի աղյուսակ 1.1-ի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում նշված ֆոնդերը պետք է բավարարեն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 337Ն

որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդերի ներդրումային սահմանափակումները» կանոնակարգ 10/10-ի 9-րդ կետով սահմանված պահանջներին:»:

Աղյուսակ 1.1.

| | ՖՈՆԴԻ ՏԵՍԱԿԸ | ՌԻՍԿԻ ԿՇԻՌԸ |
|-----------|-------------------------------------------------------------------------------------------------|--------------------|
| | ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏ ՖՈՆԴԵՐ | |
| 1. | Դրամական շուկայի ֆոնդեր | 20% |
| 2. | Ստանդարտ ֆոնդեր (տարատեսականացված) | 50% |
| | ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՖՈՆԴԵՐ | |
| 3. | Ֆոնդերի ֆոնդ, որի ակտիվները ներդրվում են միայն հրապարակային ստանդարտ տարատեսականացված ֆոնդերում | 50% |
| 4. | Անշարժ գույքի ֆոնդ (տարատեսականացված) | 75% |
| 5. | Այլ մասնագիտացված ֆոնդեր | 150% |
| | 1-5-ՐԴ ԿԵՏԵՐՈՒՄ ՉՆՇՎԱԾ ՖՈՆԴԵՐ | |
| 6. | 1-5-րդ կետերում չնշված ֆոնդեր | 150% |

(9.1, 9.2, 9.3 կետերը լրացվել են 27.11.12թ. թիվ 327 Ն որոշմամբ):

10. Սույն հավելվածի իմաստով՝ արտարժույթի առաջին խմբի մեջ մտնում են ՄԳՌ-ը, ՄԳՌ-ի զամբյուղի մեջ մտնող արտարժույթները, շվեյցարական ֆրանկը, կանադական դոլարը, շվեդական կրոնը, դանիական կրոնը, ավստրալիական դոլարը և բանկային ոսկին: Արտարժույթի երկրորդ խմբի մեջ մտնում են արտարժույթի առաջին խմբի մեջ չմտնող այլ արտարժույթները:

(10-րդ կետը լրացվել է 27.11.12թ. թիվ 327 Ն որոշմամբ):

11. ՄԳՌ-ի զամբյուղի մեջ մտնում են ԱՄՆ-ի դոլարը, եվրոն, ճապոնական իենը և անգլիական ֆունտ ստեռլինգը:

12. Սույն հավելվածում «բանկային ոսկի» հասկացությունը կիրառվում է «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում սահմանված նշանակությամբ:

13. (13-րդ կետը ուժը կորցրել է 10.01.12թ. թիվ 2 Ն որոշմամբ):

Գլուխ 2.1. Վարկային ռիսկի փոխարկման գործոնները

(Գլուխ 2.1-ի վերնագիրը լրացվել է 10.01.12թ. թիվ 2 Ն որոշմամբ):

14. Վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկելու նպատակով հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների և հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների նկատմամբ կիրառվում են սույն հավելվածի աղյուսակ 2-ով սահմանված վարկային ռիսկի փոխարկման գործոնները (ՎՌՓԳ):

(14-րդ կետը փոխվել է 10.01.12թ. թիվ 2 Ն, 27.11.12թ. թիվ 327 Ն որոշումներով):

15. Հետհաշվեկշռային հոդվածները դրանց պահուստի գումարի չափով նվազեցնելուց հետո ՎՌՓԳ-ների միջոցով վերածվում են հաշվեկշռային վարկային ռիսկի, որից հետո կշռվում են սույն հավելվածի աղյուսակ 1-ով սահմանված ռիսկի համապատասխան կշիռներով: Հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունները և հետհաշվեկշռային ածանցյալ գործիքները ՎՌՓԳ-ների միջոցով վերածվում են հաշվեկշռային վարկային ռիսկի հետևյալ բանաձևի համաձայն.

ՀՎՌ=(ՀՀ-Պ)*ՎՌՓԳ,
որտեղ՝

ՀՎՌ - ՎՌՓԳ-ների միջոցով հաշվեկշռային վարկային ռիսկի վերածված հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններն ու հետհաշվեկշռային ածանցյալ գործիքներն են, որոնք վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկելու նպատակով կշռվում են սույն հավելվածի աղյուսակ 1-ով սահմանված համապատասխան ռիսկի կշիռներով,

ՀՀ - հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններն ու հետհաշվեկշռային ածանցյալ գործիքներն են՝ հետհաշվեկշռում արտացոլված ամբողջ գումարի չափով,

Պ - հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների գծով ձևավորված պահուստի մեծությունն է,

ՎՌՓԳ - սույն հավելվածի աղյուսակ 2-ով սահմանված վարկային ռիսկի փոխարկման գործոններն են:

Աղյուսակ 2

| Հետհաշվեկշռային հոդվածներ | ՎՌՓԳ (%) | |
|--------------------------------------------------|--------------------|--------------------------|
| | Դրամային հոդվածներ | Արտարժույթային հոդվածներ |
| 1. Հետհաշվեկշռային ածանցյալ գործիքներ | 1 | 1.5 |
| 2. Հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններ | 100 | 100 |

(15-րդ կետը փոխվել է 10.01.12թ. թիվ 2 Ն, 27.11.12թ. թիվ 327 Ն որոշումներով):

15.1. Եթե միևնույն ածանցյալ գործիքի համաձայն ներդրումային ընկերությունը միաժամանակ իրականացնում է ածանցյալ գործիքի հիմքում ընկած ակտիվի առք ու վաճառք, ապա ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում ածանցյալ գործիքն ընդգրկվում է մեկ անգամ՝ ակտիվ առաջացնող մեծության չափով:

(15.1-րդ կետը լրացվել է 10.01.12թ. թիվ 2 Ն որոշմամբ):

Գլուխ 3. Վարկային ռիսկի գսպման մեխանիզմ

16. Վարկային ռիսկի հաշվարկի ընթացքում կիրառվում են ՎՌ-ՁՄ-ները: ՎՌ-ՁՄ-ն հնարավորություն է տալիս ճշգրտել ներդրումային ընկերության վարկային ռիսկի գնահատականը, եթե առկա են վարկային ռիսկը ճշգրտող գործոններ: ՎՌ-ՁՄ-ի կիրառման արդյունքում պահանջի ապահովված մասը ստանում է ապահովվածության կամ ապահովվածություն տրամադրող անձի ռիսկի կշիռը, իսկ չապահովված մասը՝ փոխառուի/գործիքի ռիսկի կշիռը:

17. Պահանջները, հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունները, հետհաշվեկշռային ածանցյալ գործիքները, դրանց գծով հաշվարկված տոկոսները (այսուհետ՝ ՎՌ-ՁՄ-ին ենթակա պահանջ) կարող են ճանաչվել ՎՌ-ՁՄ-ի առարկա, եթե միաժամանակ բավարարված են հետևյալ պայմանները.

1) ՎՌ-ՁՄ-ին ենթակա պահանջի գծով առկա է սույն հավելվածի 27-րդ կետով սահմանված առաջնային ֆինանսական գրավ, որը վերագնահատվում է նվազագույնը վեց ամիսը մեկ անգամ, կամ Ստանդարտ և Փուրգ/Ֆիտչ/Մուդիզ վարկանիշային գործակալությունների կամ Կենտրոնական բանկի կողմից վարկանիշ ստացած այլ սուբյեկտի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության, Կենտրոնական բանկի ,շուկայի հիմնական մասնակիցների, սույն հավելվածի աղյուսակի 1-ի 7-րդ կետում նշված կազմակերպությունների երաշխիք կամ երաշխավորություն,

2) առկա են ապահովվածությունը հաստատող համապատասխան փաստաթղթեր,

3) գրավի առարկայի՝ մինչև մարումն ընկած ժամկետը, իսկ երաշխիքի/երաշխավորության (այսուհետ՝ ապահովվածություն) տրամադրման ժամկետը մեծ կամ հավասար է ՎՌ-ՁՄ-ին ենթակա պահանջի մարման ժամկետին (չկա բացասական ժամկետային անհամապատասխանություն),

4) փոխառուի վարկունակության և գրավի առարկայի, երաշխիք կամ երաշխավորություն տրամադրողի միջև չկա դրական կորելացիա (օրինակ՝ երաշխավորը փոխառուի հետ փոխկապակցված անձ չէ, կամ գրավը փոխառուի կողմից թողարկված արժեթուղթ չէ և այլն), բացառությամբ այն դեպքերի, երբ երաշխավորություն տրամադրողը Կենտրոնական բանկը կամ Հայաստանի Հանրապետության կառավարությունն է կամ գրավի առարկան հանդիսանում է Կենտրոնական բանկի կողմից թողարկված արժեթուղթ կամ Հայաստանի Հանրապետության գանձապետական պարտատոմս,

5) փոխառուի կողմից պայմանագրով սահմանված պարտավորությունների չկատարման դեպքում ներդրումային ընկերությունն ունի գրավի իրացման արտադատարանային իրավունք (միայն գրավի դեպքում),

6) փոխառուի կողմից պարտավորությունների չկատարման դեպքում գրավի առարկայի փաստացի իրացման հնարավորության կամ ներդրումային ընկերությանը տրամադրված երաշխիքի/երաշխավորության կատարման ժամկետների առումով չկան պայմանագրով և/կամ այլ փոխադարձ համաձայնությամբ նախատեսված սահմանափակումներ:

7) ապահովվածության կամ ապահովվածություն տրամադրող անձի ռիսկի կշիռը ցածր է ՎՌ-ՁՄ-ին ենթակա պահանջի ռիսկի կշռից:

(17-րդ կետը փոխվել է, լրացվել է 27.11.12թ. թիվ 327 Ն, 10.01.12թ. թիվ 2 Ն որոշումներով):

18. (18-րդ կետը փոխվել է 10.01.12թ. թիվ 2 Ն որոշմամբ, որից հետո ուժը կորցրել է 27.11.12թ. թիվ 327 Ն որոշմամբ):

19. ՎՌ-ՁՄ-ի կիրառումը ապահովելու նպատակով անհրաժեշտ է կատարել սույն հավելվածի 26-րդ կետով սահմանված արժեքի տատանման գործակիցների միջոցով ՎՌ-ՁՄ-ին ենթակա պահանջի և ապահովվածության մեծության ճշգրտում, եթե դրանց գծով սույն հավելվածի 26-րդ կետով սահմանված են արժեքի տատանման գործակիցներ, կամ ՎՌ-ՁՄ-ին ենթակա պահանջը և համապատասխան ապահովվածությունն արտահայտված են տարբեր արժույթներով:

20. Արժեքի տատանման գործակիցների կիրառման դեպքում.

1) ՎՌ-ՁՄ-ին ենթակա պահանջի ճշգրտված արժեքը կլինի բարձր ՎՌ-ՁՄ-ին ենթակա պահանջի արժեքից՝ համաձայն սույն հավելվածի 21-րդ կետի,

2) ապահովվածության ճշգրտված արժեքը կլինի ցածր ապահովվածության արժեքից՝ համաձայն սույն հավելվածի 22-րդ կետի:

21. ՎՌ-ՁՄ շրջանակներում արժեքի տատանման գործակիցների կիրառմամբ ներդրումային ընկերությունները ճշգրտում են ՎՌ-ՁՄ-ին ենթակա պահանջների մեծությունները հետևյալ բանաձևի համաձայն.

$$V_n^6 = (V_n - \Omega) (1 + Q_v),$$

որտեղ՝

« V_n^6 » – ՎՌ-ՁՄ-ին ենթակա պահանջի ճշգրտված մեծությունն է՝ հաշվի առած արժեքի տատանման գործակիցը,

« V_n » – ՎՌ-ՁՄ-ին ենթակա պահանջի մեծությունն է՝ հնարավոր կորուստների պահուստի գումարների չափով նվազեցնելուց և արժեքը ճշգրտելուց առաջ,

« Ω » - ՎՌ-ՁՄ-ին ենթակա պահանջի գծով ձևավորված հնարավոր կորուստների պահուստի մեծությունն է:

« Q_v » – 26-րդ կետով սահմանված արժեքի տատանման գործակիցն է:

22. ՎՌ-ԶՄ շրջանակներում արժեքի տատանման գործակիցների կիրառմամբ ներդրումային ընկերությունները ճշգրտում են ապահովածությունների մեծությունները հետևյալ բանաձևի համաձայն.

$$U^{\alpha} = U(1 - Q_q - Q_{\phi\mu}),$$

որտեղ՝

« U^{α} » – ապահովվածության ճշգրտված արժեքն է՝ հաշվի առած արժեքի տատանման գործակիցը,

« U » – ապահովվածության արժեքն է,

« Q_q » – 26-րդ կետով սահմանված արժեքի տատանման գործակիցն է,

« $Q_{\phi\mu}$ » – փոխարժեքի տատանման գործակիցն է:

Եթե ՎՌ-ԶՄ-ին ենթակա պահանջը և ապահովվածությունը տարբեր արժույթներով են, ապա որպես փոխարժեքային տատանման գործակից (այսուհետև՝ $Q_{\phi\mu}$)՝ հիմք է ընդունվում 8%-ը: Հակառակ դեպքում, եթե ՎՌ-ԶՄ-ին ենթակա պահանջը և ապահովվածությունը միևնույն արժույթներով են, ապա « $Q_{\phi\mu}$ »-ն հավասար է 0%-ի:

23. Եթե պահանջի գծով առկա չեն արժեքի տատանման գործակիցներ, ապա ՎՌ-ԶՄ ենթակա պահանջի արժեքը հավասար է պահանջի և հնարավոր կորուստների պահուստի տարբերությանը: Եթե պահանջի գծով առկա է արժեքի տատանման գործակից, ապա ՎՌ-ԶՄ ենթակա պահանջի ճշգրտված արժեքը որոշվում է սույն հավելվածի 21-րդ կետի համաձայն: Արտահաշվեկշռային պայմանական պարտավորությունների դեպքում ՎՌ-ԶՄ ենթակա պահանջի արժեքը որոշվում է սույն հավելվածի 14-րդ կետի համաձայն: Ապահովվածության ճշգրտված արժեքը հաշվարկվում է սույն հավելվածի 22-րդ կետի համաձայն:

23.1 Ռեպո համաձայնագրերը և դրանց գծով հաշվարկված տոկոսները վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվում են հետևյալ բանաձևի համաձայն՝

$$Ռ< = Առավելագույն [ԴՄXԴԻ; Պ<],$$

որտեղ՝

Ռ< - ռեպո համաձայնագրի և դրանց գծով հաշվարկված տոկոսների՝ վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվող գումարն է,

ԴՄ - ռեպո համաձայնագրով տրամադրված դրամական միջոցների արժեքն է,

ԴԻ - ռեպո համաձայնագրով տրամադրված դրամական միջոցների ռիսկի կշիռն է՝ համաձայն սույն հավելվածի աղյուսակ 1-ի:

Պ< - սույն գլխով սահմանված կարգով և դեպքերում ՎՌ-ԶՄ կիրառման արդյունքում հաշվարկված ռեպո համաձայնագրի գծով պահանջի ճշգրտված մեծությունն է, իսկ ՎՌ-ԶՄ չկիրառելու դեպքում՝ ռեպո համաձայնագրի հաշվեկշռային արժեքի և ռեպո գործառնության կողմ հանդիսացող անձի (գործընկերոջ) վարկային ռիսկի կշռի (համաձայն սույն հավելվածի աղյուսակ 1-ի՝ հաշվի առնելով ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթի արժույթը) արտադրյալն է:

23.2. Ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթերը վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվում են հետևյալ բանաձևի համաձայն՝

$$Ռ<Ա = Առավելագույն [ԶԱ X ԳԻ; Ա< X ԹԻ],$$
 որտեղ՝

ՌՎԱ - ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթի՝ վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվող գումարն է,

ՉԱ - ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթի չապահովված մասն է, որը որոշվում է որպես՝

ա. ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթի հաշվեկշռային ճշգրտված արժեքի (կիրառելով սույն գլխով սահմանված արժեքի տատանման գործակիցները), և

բ. ստացված դրամական միջոցների ու դրանց գծով վճարվելիք գումարների հանրագումարի դրական տարբերություն,

ԳՌ - ռեպո գործառնության կողմ հանդիսացող անձի (գործընկերոջ) վարկային ռիսկի կշիռը՝ համաձայն սույն հավելվածի աղյուսակ 1-ի՝ հաշվի առնելով ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթի արժույթը,

ԱՀ - ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթի հաշվեկշռային արժեքը,

ԹՌ - ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթի թողարկողի (գործիքի) վարկային ռիսկի կշիռը՝ համաձայն սույն հավելվածի աղյուսակ 1-ի:

Փոխառությամբ տրամադրված արժեթղթերը վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվում են սույն կետով սահմանված կարգով:

(23.1, 23.2 կետերը լրացվել են 27.11.12թ. թիվ 327 Ն որոշմամբ):

24. ՎՌ-ՉՄ շրջանակներում ՎՌ-ՉՄ-ին ենթակա պահանջի ապահովված մասը ստանում է 20% և ավելի բարձր ռիսկի կշիռ, բացառությամբ սույն կետով նախատեսված դեպքերի:

1) Ֆինանսական գրավով ապահովված ՎՌ-ՉՄ-ին ենթակա պահանջը վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվում է 0% ռիսկի կշռով, եթե բավարարված են հետևյալ պայմանները միաժամանակ.

ա. ապահովման միջոցը Հայաստանի Հանրապետության դրամով Կենտրոնական բանկի կողմից թողարկված արժեթուղթ է, Հայաստանի Հանրապետության պետական գանձապետական պարտատոմս կամ այլ երկրների կենտրոնական բանկերի կամ կառավարությունների կողմից թողարկված արժեթուղթ, որը, համաձայն սույն հավելվածի աղյուսակ 1-ի, վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվում է 0% ռիսկի կշռով,

բ. գրավը վերագնահատվում է ամեն օր,

գ. փոխառուն (պարտապանը) դասվում է սույն հավելվածի 28-րդ կետով սահմանվող շուկայի հիմնական մասնակիցների շարքին:

2) Երաշխիքով կամ երաշխավորությամբ ապահովված պահանջը վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվում է 0% ռիսկի կշռով, եթե երաշխիք կամ երաշխավորություն տրամադրողը

ա. Հայաստանի Հանրապետության կառավարությունն է կամ Կենտրոնական բանկը.

բ. դասվում է սույն հավելվածի 28-րդ կետով սահմանված շուկայի հիմնական մասնակիցների շարքին, որոնց նկատմամբ պահանջները, սույն հավելվածի աղյուսակ 1-ի համաձայն, վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվում են 0% ռիսկի կշռով,

գ. հանդիսանում է սույն հավելվածի աղյուսակ 1-ի 7-րդ կետում նշված կազմակերպություն:

3) Պահանջի ապահովված մասը վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվում է 10% ռիսկի կշռով, եթե՝

ա. գրավը արտարժույթով Կենտրոնական բանկի կողմից թողարկված արժեթուղթ, Հայաստանի Հանրապետության պետական գանձապետական պարտատոմս է, որը սույն հավելվածի աղյուսակ 1-ի համաձայն, վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվում է 10% ռիսկի կշռով, ինչպես նաև բավարարված են սույն կետի 1-ին ենթակետով (բացառությամբ «ա» պարբերությամբ) սահմանված պայմանները, կամ

բ. գործարքը բավարարում է սույն կետի 1-ին ենթակետով (բացառությամբ «գ» պարբերությամբ) սահմանված պայմաններին:

(24-րդ կետը լրացվել է 27.11.12թ. թիվ 327 Ն որոշմամբ):

25. Եթե ՎՌ-ՉՄ-ին ենթակա պահանջն ունի մեկ տեսակից ավելի ապահովվածություն, որոնց հանրագումարը գերազանցում է պահանջի մեծությունը, և որոնք ունեն տարբեր ռիսկի կշիռներ, ապա ՎՌ-ՉՄ-ին ենթակա պահանջի ապահովված մասի ռիսկի կշիռը որոշելու համար հիմք պետք է ընդունել ապահովման միջոցների ռիսկի կշիռները՝ ըստ ռիսկի կշիռների աճման կարգի (սկզբում հիմք ընդունելով առավել ցածր ռիսկի կշիռ ունեցող ապահովման միջոցի ռիսկի կշիռը, այնուհետ՝ հաջորդաբար մյուս ապահովման միջոցների ռիսկի կշիռները մինչև պահանջի գումարի ծածկումը):

26. Արժեքի տատանման գործակիցներ
Աղյուսակ 3

| Արժեթղթերի տեսակներ և վարկանիշներ | Մարմանը մնացած ժամկետ | Արժեքի տատանման գործակիցներ (%) | |
|-----------------------------------------------------------------------------------------------------------|-----------------------|---------------------------------------------------------------------|-----------------|
| | | Կենտրոնական բանկեր/հառավարություն/տեղական ինքնակառավարման մարմիններ | Այլ թողարկողներ |
| 1. Հայաստանի Հանրապետության դրամով Կենտրոնական բանկի թողարկած արժեթղթեր, Հայաստանի Հանրապետության պետական | < 1 տարի | 1 | - |
| | ≥ 1 տարի, < 5 տարի | 2 | - |

| | | | |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------------------|----------|-----------|
| <p>զանձապետական պարտատոմսեր, 2. /ԱԱԱ/Աաա/-ից /ԱԱ-/Աա3/ վարկանիշ ունեցող օտարերկրյա կենտրոնական բանկերի, կառավարությունների, տեղական ինքնակառավարման մարմինների թողարկած պարտատոմսեր,</p> | <p>≥ 5 տարի</p> | <p>4</p> | <p>-</p> |
| <p>3.Օտարերկրյա բանկերի և ոչ բանկ կազմակերպությունների՝ /ԱԱԱ/Աաա/-ից /ԱԱ-/Աա3/ վարկանիշ ունեցող պարտատոմսեր, 4.Օտարերկրյա բանկերի և ոչ բանկ կազմակերպությունների՝ /Ա-1+,Ա-1/Ֆ1+,Ֆ1/Պ-1/ վարկանիշ ունեցող պարտատոմսեր,</p> | <p>< 1 տարի</p> | <p>-</p> | <p>1</p> |
| | <p>≥ 1 տարի, < 5 տարի</p> | <p>-</p> | <p>4</p> |
| | <p>≥ 5 տարի</p> | <p>-</p> | <p>8</p> |
| <p>5.Արտարժույթով Կենտրոնական բանկի թողարկած արժեթղթեր, Հայաստանի Հանրապետության պետական զանձապետական պարտատոմսեր, 6./Ա+/Ա1/-ից /ԲԲԲ-/Բաա3/ վարկանիշ ունեցող օտարերկրյա կենտրոնական բանկերի, կառավարությունների, տեղական ինքնակառավարման մարմինների թողարկած պարտատոմսեր,</p> | <p>< 1 տարի</p> | <p>2</p> | <p>-</p> |
| | <p>≥ 1 տարի, < 5 տարի</p> | <p>3</p> | <p>-</p> |
| | <p>≥ 5 տարի</p> | <p>6</p> | <p>-</p> |
| <p>7. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների և օտարերկրյա բանկերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերի թողարկած պարտատոմսեր, 8. Օտարերկրյա բանկերի և ոչ բանկ կազմակերպությունների՝ /Ա+/Ա1/-ից /ԲԲԲ-/Բաա3/ վարկանիշ ունեցող պարտատոմսեր, 9. Օտարերկրյա բանկերի և ոչ բանկ կազմակերպությունների՝ /Ա-2/Ֆ2/Պ-2/ վարկանիշ ունեցող պարտատոմսեր,</p> | <p>< 1 տարի</p> | <p>-</p> | <p>2</p> |
| | <p>≥ 1 տարի, < 5 տարի</p> | <p>-</p> | <p>6</p> |
| | <p>≥ 5 տարի</p> | <p>-</p> | <p>12</p> |

| | |
|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----|
| <p>10. /ԲԲ+/Բա1/-ից /ԲԲ-/Բա3/ վարկանիշ ունեցող օտարերկրյա կենտրոնական բանկերի, կառավարությունների, տեղական կառավարման մարմինների թողարկած պարտատոմսեր,</p> <p>11. Օտարերկրյա բանկերի և ոչ բանկ կազմակերպությունների՝ /ԲԲ+/Բա1/-ից /ԲԲ-/Բա3/ վարկանիշ ունեցող պարտատոմսեր,</p> <p>12. Օտարերկրյա բանկերի և ոչ բանկ կազմակերպությունների՝ /Ա-3/Ֆ3/Պ-3/ վարկանիշ ունեցող պարտատոմսեր,</p> <p>13. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների բաժնետոմսեր,</p> <p>14. Կենտրոնական բանկի կողմից վարկանիշ ստացած ոչ ֆինանսական կազմակերպությունների թողարկած պարտատոմսեր, որոնց վարկանիշը «Գ-» և ավելի բարձր է,</p> <p>15. /ԱԱԱ/Աաա/-ից /ԱԱ-/Աա3/ վարկանիշ ունեցող բանկերի և ոչ բանկ կազմակերպությունների բաժնետոմսեր,</p> | 20 |
| <p>16. Կենտրոնական բանկի կողմից վարկանիշ ստացած ոչ ֆինանսական կազմակերպությունների բաժնետոմսեր, որոնց վարկանիշը «Գ-» և ավելի բարձր է,</p> <p>17. /Ա+/Ա1/-ից /ԲԲԲ-/Բաա3/ վարկանիշ ունեցող բանկերի և ոչ բանկ կազմակերպությունների բաժնետոմսեր</p> | 30 |

27. ՎՈՋՄ-ում օգտագործվող ֆինանսական գրավի առարկաներն են .

- 1) Կենտրոնական բանկի թողարկած արժեթղթերը,
- 2) Հայաստանի Հանրապետության պետական գանձապետական պարտատոմսերը, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից թողարկված փոխանցելի մուրհակներ, որոնց մինչև մարումն ընկած ժամանակահատվածը մինչև 1 տարի է և որոնք ենթակա են պարտադիր վճարման Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության գանձապետական միասնական հաշվի միջոցներից դատական ակտերի հիման վրա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից բռնագանձման ենթակա գումարների դիմաց փոխանցելի Հայաստանի Հանրապետության պետական մուրհակներ,
- 3) Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների և օտարերկրյա բանկերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերի թողարկած պարտատոմսեր,
- 4) Կենտրոնական բանկի կողմից վարկանիշ ստացած ոչ ֆինանսական կազմակերպությունների թողարկած պարտատոմսեր, որոնց վարկանիշը «Գ-» և ավելի բարձր է,
- 5) /ԲԲԲ-/Բաա3/ և ավելի բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա կենտրոնական բանկերի, կառավարությունների, տեղական ինքնակառավարման մարմինների թողարկած պարտատոմսեր,
- 6) Օտարերկրյա բանկերի կողմից թողարկված /ԲԲԲ-/Բաա3/ և ավելի բարձր վարկանիշ ունեցող պարտատոմսեր,
- 7) Օտարերկրյա ոչ բանկ կազմակերպությունների կողմից թողարկված /Ա-/Ա3/ և ավելի բարձր վարկանիշ ունեցող պարտատոմսեր,
- 8) Օտարերկրյա բանկերի ու ոչ բանկ կազմակերպությունների /Ա-2/Ֆ2/Պ-2/ և ավելի բարձր վարկանիշ ունեցող պարտատոմսեր,
- 9) Կենտրոնական բանկի կողմից վարկանիշ ստացած «Գ-» և ավելի բարձր վարկանիշ ունեցող ոչ ֆինանսական կազմակերպությունների բաժնետոմսեր,

- 10) Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների բաժնետոմսեր,
- 11) /ԲԲԲ-/Բաա3/ և ավելի բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա բանկերի բաժնետոմսեր, որոնք մտնում են սույն հավելվածի 29-րդ կետով սահմանված բորսայական ինդեքսների մեջ,
- 12) /Ա-/Ա3/ և ավելի բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա ոչ բանկ կազմակերպությունների բաժնետոմսեր, որոնք մտնում են սույն հավելվածի 29-րդ կետով սահմանված բորսայական ինդեքսների մեջ,
- 13) ֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսեր:

(27-րդ կետը լրացվել է 10.01.12թ. թիվ 2 Ն որոշմամբ):

28. Սույն կանոնակարգի իմաստով՝ շուկայի հիմնական մասնակիցների շարքին են դասվում.

- 1) Պետությունները/կառավարությունները, կենտրոնական բանկերը և տեղական ինքնակառավարման մարմինները.
- 2) Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը, վարկային կազմակերպությունները և օտարերկրյա բանկերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերը:
- 3) Օտարերկրյա բանկերը:
- 4) Այլ ֆինանսական կազմակերպությունները (ներառյալ՝ ներդրումային և ապահովագրական ընկերությունները), որոնց նկատմամբ պահանջները սույն հավելվածի աղյուսակ 1-ի համաձայն՝ վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվում են 20% ռիսկի կշիռով:

29. Սույն կանոնակարգի իմաստով՝ բորսայական ինդեքսների շարքին են դասվում սույն հավելվածի 4-րդ աղյուսակում սահմանված ինդեքսները:

Աղյուսակ 4

| Բորսայական ինդեքսների անվանումը | Երկիրը |
|----------------------------------------|------------------------|
| Օլ Օրդս (All Ords) | Ավստրալիա |
| Էյթիէքս (ATX) | Ավստրիա |
| ԲԵԼ 20 (BEL20) | Բելգիա |
| Եվրոնեքստ 100 (Euronext 100) | միջազգային |
| ՍիԷյՍի 40 (CAC 40) | Ֆրանսիա |
| ԻԲԵՔՍ 35 (IBEX 35) | Իսպանիա |
| ԷյիԷքս(AEX) | Նիդերլանդներ |
| Հանգ Սենգ (Hang Seng) | Հոնկոնգ |
| Նիկկեյ 225 (Nikkei225) | Ճապոնիա |
| ԴԱՔս (DAX) | Գերմանիա |
| ՍՄԻ (SMI) | Շվեյցարիա |
| ՆԱՍԴԱՔ Քոմպոզիթ (NASDAQ Composite) | ԱՄՆ |
| ՆԱՍԴԱՔ 100 (NASDAQ 100) | ԱՄՆ |
| ՕԷմԷքս Ստոքհոլմ 30 (OMX Stockholm 30) | Շվեդիա |
| Էս և Փի 500 (S&P500) | ԱՄՆ |
| Դոու Ջոնս (Dow Jones) | ԱՄՆ |
| ՖՏՍԵ 100 (FTSE100) | Միացյալ Թագավորություն |
| ՖՏՍԵ միդ-250 (FTSE mid-250) | Միացյալ Թագավորություն |

ԳԼՈՒԽ 3. Վարկային ռիսկի հաշվարկի ընթացքում վարկանիշների կիրառման սկզբունքները

30. Կենտրոնական բանկի կողմից վարկանիշ ստացած ոչ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջները ռիսկով կշռելու համար պետք է օգտագործել Կենտրոնական բանկի սահմանած վարկանիշները: Ընդ որում, Կենտրոնական բանկի կողմից սահմանվող վարկանիշների կիրառման դեպքում յուրաքանչյուր օրվա համար պետք է հիմք ընդունել Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում առկա վարկանիշները:

31. Օտարերկրյա կենտրոնական բանկերի, կառավարությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, օտարերկրյա բանկերի և ոչ բանկ կազմակերպությունների նկատմամբ պահանջները ռիսկով կշռելու համար օգտագործվում են միայն /Ստանդարտ և Փուրգ/Ֆիթչ/Մոդիզ/ վարկանիշային գործակալությունների սահմանած վարկանիշները: Ընդ որում, Ստանդարտ և Փուրգ ու Ֆիթչ վարկանիշային գործակալությունների կողմից սահմանված երկարաժամկետ վարկանիշների սանդղակները համընկնում են:

32. Ներդրումային ընկերությունները պարտավոր են թարմացնել վարկանիշային գործակալությունների սահմանած վարկանիշները՝ հիմք ընդունելով սույն հավելվածի 31-րդ կետով սահմանված վարկանիշային գործակալությունների կողմից տվյալ օրվան վերաբերող վարկանիշները:

33. Եթե տվյալ պահանջն ունի միայն մեկ վարկանիշային գործակալության կողմից տրված վարկանիշ, ապա տվյալ պահանջի ռիսկի կշիռը որոշելու համար հիմք է ընդունվում միայն տվյալ վարկանիշը: Եթե միևնույն պահանջի համար առկա է երկու տարբեր վարկանիշ՝ տրամադրված տարբեր վարկանիշային գործակալությունների կողմից, պետք է հիմք ընդունել ամենացածր վարկանիշը: Իսկ միևնույն պահանջի համար երեք և ավելի վարկանիշների առկայության դեպքում պետք է հիմք ընդունել երկու ամենաբարձր վարկանիշներից առավել ցածր վարկանիշը:

34. Օտարերկրյա կենտրոնական բանկերի, կառավարությունների, տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ պահանջները վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկելու համար պետք է հիմք ընդունել վարկանիշները՝ կախված գործիքների տեսակից և արժույթից: Իսկ օտարերկրյա բանկերի և ոչ բանկ կազմակերպությունների նկատմամբ պահանջների համար հիմք պետք է ընդունել վարկանիշները՝ կախված պահանջների ժամկետայնությունից, արժույթից և գործիքների տեսակից:

35. Սույն հավելվածի առումով՝ կարճաժամկետ պահանջներ են համարվում ցպահանջ և մինչև 90 օր (ներառյալ) մարման ժամկետ ունեցող պահանջները, իսկ երկարաժամկետ՝ 90 օրից ավելի մարման ժամկետ ունեցող և մարման սահմանված ժամկետ չունեցող պահանջները:

36. Եթե առկա չէ կարճաժամկետ վարկանիշ, ապա օտարերկրյա բանկերի և ոչ բանկ կազմակերպությունների նկատմամբ կարճաժամկետ պահանջի ռիսկի կշիռը որոշելու համար հիմք կարող է ընդունվել սույն հավելվածի աղյուսակ 1-ի 16-րդ և 19-րդ կետերում

ներկայացված երկարաժամկետ վարկանիշներին համապատասխան կշիռներից մեկ մակարդակ ավելի բարենպաստ ռիսկի կշիռը: Սույն կետի կիրառման իմաստով բացառություն են կազմում 20% և 150% ռիսկի կշիռները (այսինքն՝ կարճաժամկետ պահանջները պետք է կշռել, համապատասխանաբար, 20% և 150% ռիսկի կշռով):

37. Օտարերկրյա կառավարությունների և կենտրոնական բանկերի, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև Կենտրոնական բանկի կողմից վարկանիշ ստացած ոչ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ և՛ կարճաժամկետ, և՛ երկարաժամկետ պահանջները ռիսկով կշռելու, ինչպես նաև վերոնշյալ անձանց նկատմամբ սույն հավելվածով սահմանված վարկանիշները կիրառելու նպատակով պետք է հիմք ընդունել բացառապես երկարաժամկետ վարկանիշները:

38. Եթե անձի/գործիքի նկատմամբ կարճաժամկետ պահանջի ռիսկի կշիռը 150% է, ապա տվյալ անձի/գործիքի նկատմամբ ցանկացած վարկանիշ չունեցող պահանջները (թե երկարաժամկետ, թե կարճաժամկետ) վարկային ռիսկի հաշվարկում պետք է ընդգրկվեն 150% ռիսկի կշռով:

39. Ֆինանսական խմբի մեջ գտնվող ցանկացած անձի տրված վարկանիշը չի տարածվում/կիրառվում ֆինանսական խմբի և ֆինանսական խմբի մեջ մտնող անձանց վրա:

40. Ֆինանսական խմբին տրված վարկանիշը չի տարածվում/կիրառվում խմբի մեջ մտնող անձանց վրա:

Հավելված 2

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2009 թվականի հուլիսի 28-ի թիվ 231-Ն որոշմամբ հաստատված Կանոնակարգ 4/02-ի

ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՌԻՍԿԻ ՀԱՇՎԱՐԿ

ԳԼՈՒԽ 1. Շուկայական ռիսկի հաշվարկ

1. Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև սահմանային հարաբերակցության՝ Ն1 նորմատիվի հաշվարկում ընդգրկելու նպատակով շուկայական ռիսկը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$\text{ՇՌ} = \text{ԱՌ} + \text{ՏՌ} + \text{ԲԱԳՌ},$$

որտեղ՝

ՇՌ – շուկայական ռիսկն է,

ԱՌ – արտարժույթային ռիսկն է՝ ամսվա միջին օրական հաշվարկով,

ՏՌ – տոկոսադրույքի ռիսկն է՝ ամսվա միջին օրական հաշվարկով,

ԲԱԳՌ – բաժնային արժեթղթերի գնային ռիսկն է՝ ամսվա միջին օրական հաշվարկով:

2. Շուկայական ռիսկի հաշվարկում տոկոսադրույքի և բաժնային արժեթղթերի գնային ռիսկերը հաշվարկվում են միայն այն դեպքում, երբ հաշվետու ժամանակաշրջանին նախորդող ամսվա կամ հաշվետու ամսվա միջին օրական հաշվարկով.

1) շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների հանրագումարը գերազանցում է ընդհանուր հաշվեկշռային ակտիվների 3 տոկոսը, կամ

2) շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների հանրագումարը գերազանցում է ներդրումային ընկերության նորմատիվային ընդհանուր կապիտալի 20 տոկոսը:

(2-րդ կետը փոխվել է 10.01.12թ. թիվ 2 Ն որոշմամբ):

ՊԼՈՒԽ 2. Արտարժութային ռիսկի հաշվարկ

3. Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև սահմանային հարաբերակցության՝ Ն1 նորմատիվի հաշվարկման նպատակով արտարժութային ռիսկը հաշվարկվում է արտարժութային ռիսկի հաշվարկման Ստանդարտ կամ ՎաՌ-մեթոդաբանության համաձայն:

4. Ներդրումային ընկերությունները տարին մեկ անգամ ընտրում են այն մեթոդաբանությունը (Ստանդարտ կամ ՎաՌ-մեթոդաբանություն), որով պետք է հաշվարկեն արտարժութային ռիսկը՝ այդ մասին տեղեկացնելով Կենտրոնական բանկին մինչև յուրաքանչյուր տարվան նախորդող տարվա դեկտեմբերի 31-ը: Ընդ որում՝ ըստ ստանդարտ մեթոդաբանության՝ հաշվարկը կատարվում է սույն հավելվածի 5-ից 13-րդ կետերի համաձայն, իսկ ըստ ՎաՌ-մեթոդաբանության՝ սույն հավելվածի 14-րդ կետի համաձայն:

5. Ներդրումային ընկերության ակտիվները կամ պարտավորությունները պարունակում են արտարժութային ռիսկ, երբ դրանց մեծությունները, դրանց գծով ստացվելիք կամ վճարվելիք գումարները դրամային արտահայտությամբ ժամանակի ընթացքում կարող են փոփոխվել՝ պայմանավորված արտարժույթի՝ Հայաստանի Հանրապետության դրամի նկատմամբ փոխարժեքի փոփոխությամբ: Ընդ որում, արտարժութային ռիսկի հաշվարկման իմաստով՝ արտարժութային ռիսկ են պարունակում նաև թանկարժեք մետաղների բանկային կամ ստանդարտացված ձուլակտորները, մետաղական հաշիվները, ինչպես նաև թանկարժեք մետաղների բանկային կամ ստանդարտացված ձուլակտորներով արտահայտված ակտիվները և պարտավորությունները:

(5-րդ կետը փոխվել է 10.01.12թ. թիվ 2 Ն որոշմամբ):

6. Արտարժութային դիրքերի հաշվարկում ընդգրկվում են նաև հետհաշվեկշռային ածանցյալ գործիքները միայն հետհաշվեկշռում գրանցված գումարների (ներառյալ դրանց գծով հետհաշվեկշռում գրանցված տոկոսները) և հաշվեկշռում հաշվեգրված տույժերի և տուգանքների չափով (եթե այդպիսիք կան):

(6-րդ կետը փոխվել է 10.01.12թ. թիվ 2 Ն, 27.11.12թ. թիվ 327 Ն որոշումներով):

7. Արտարժութային դիրքը ներդրումային ընկերության արտարժութային ռիսկ պարունակող ակտիվների և արտարժութային ռիսկ պարունակող պարտավորությունների միջև եղած տարբերությունն է: Արտարժութային դիրքերը սահմանվում են.

1) երկար, եթե տարբերությունը մեծ է զրոյից,

- 2) կարճ, եթե տարբերությունը փոքր է գրոյից,
- 3) փակ, եթե տարբերությունը հավասար է գրոյի,
- 4) բաց, եթե տարբերությունը մեծ կամ փոքր է գրոյից:

8. Արտարժութային առավելագույն դիրքը ներքոհիշյալ մեծությունների հանրագումարն է.

- 1) արտարժութային երկար դիրքերի հանրագումարի և արտարժութային կարճ դիրքերի հանրագումարի բացարձակ մեծություններից առավելագույն մեծություն,
- 2) թանկարժեք մետաղների բանկային կամ ստանդարտացված ձուլակտորների և մետաղական հաշիվների բաց դիրքերի բացարձակ մեծությունների հանրագումար:

(8-րդ կետը փոխվել է 10.01.12թ. թիվ 2 Ն որոշմամբ):

9. Արտարժութային դիրքի հաշվարկն իրականացվում է արտարժույթների առանձին տեսակներով: Արտարժութային ռիսկի հաշվարկման իմաստով բանկային ոսկին, ոսկու ստանդարտացված ձուլակտորները, որոնց հարգը փոքր չէ 999-ից, դրանցով արտահայտված պահանջներն ու պարտավորությունները և մետաղական հաշիվները դիտվում են որպես արտարժույթի մեկ տեսակ:

(9-րդ կետը լրացվել է 10.01.12թ. թիվ 2 Ն որոշմամբ):

10. Արտարժութային դիրքերի հաշվարկում չեն ընդգրկվում արտարժութային ռիսկ պարունակող այն ակտիվները, որոնք նվազեցվում են հիմնական կապիտալի հաշվարկից:

11. Արտարժութային դիրքերը հաշվարկվում են յուրաքանչյուր օրվա դրությամբ և արտահայտվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ հիմք ընդունելով տվյալ օրվա համար Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքը, իսկ բանկային ոսկու, թանկարժեք մետաղների ստանդարտացված ձուլակտորների, մետաղական հաշիվների դեպքում Կենտրոնական բանկի կողմից հրապարակված թանկարժեք մետաղների հաշվարկային գները: Եթե ներդրումային ընկերությունն ունի բաց արտարժութային դիրք այնպիսի արտարժույթի գծով, որի փոխարժեքը Հայաստանի Հանրապետության դրամի նկատմամբ չի հրապարակվում Կենտրոնական բանկի պաշտոնական էլեկտրոնային կայքում, ապա պետք է հիմք ընդունել տվյալ պետության Կենտրոնական բանկի կողմից հաստատված ԱՄՆ դոլար/Հակաստանի Հանրապետության դրամ փոխարժեքները:

(11-րդ կետը փոխվել է 10.01.12թ. թիվ 2 Ն որոշմամբ):

12. Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև սահմանային հարաբերակցության՝ Ն1 նորմատիվի հաշվարկում ընդգրկելու նպատակով արտարժույթային ռիսկը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$ԱՌ =$ առավելագույն (ԱԱԳ-1, ԱԱԳ-2, ..., ԱԱԳ-Ն) որտեղ՝

ԱՌ-արտարժույթային ռիսկն է,

ԱԱԳ-1, ԱԱԳ-2, ..., ԱԱԳ-Ն – արտարժույթային առավելագույն դիրքի 12 տոկոսն է՝ ըստ հաշվետու ամսվա օրերի,

«Ն» - հաշվետու ամսվա օրերի թիվն է:

13. Այն օրերին, երբ ներդրումային ընկերության հաշվեկշիռը փոփոխություններ չի կրել (ներառյալ՝ ոչ աշխատանքային օրերը), օրական տվյալների հաշվարկում ընդգրկվում են նախորդ օրվա տվյալները:

14. ՎաՌ մեթոդաբանության համաձայն՝ արտարժույթային ռիսկը հաշվարկելու նպատակով ներդրումային ընկերությունները պետք է հաշվարկեն սույն կետի 1-ից 8-րդ ենթակետերով սահմանված մեծությունները՝ օրական պարբերականությամբ.

1) Հաշվարկել ներդրումային ընկերության արտարժույթային դիրքերը՝ արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամով՝ համաձայն սույն հավելվածի 5, 6 և 7-րդ կետերով սահմանված կարգի: Հիմք ընդունելով հաշվարկված դիրքերը՝ պետք է կառուցել արտարժույթային դիրքերի միաչափ «1xԱ» մատրիցան: Հաշվարկն իրականացվում է ըստ հետևյալ բանաձևի.

2)

$$Ռ = (Ռ_1, Ռ_2, \dots, Ռ_U),$$

որտեղ՝

«Ռ» - արտարժույթների դիրքերի բացարձակ մեծություններն են՝ ըստ արտարժույթների տեսակների,

«Ա» - արտարժույթի տեսակներն են:

3) Ձևավորել այն արտարժույթների՝ Հայաստանի Հանրապետության դրամի նկատմամբ Կենտրոնական բանկի հայտարարած օրական փոխարժեքների ժամանակային շարքերը, որոնց գծով հաշվետու ժամանակաշրջանում եղել է բաց դիրք: Ժամանակային շարքերը պետք է կազմված լինեն տվյալ օրվա և արտարժույթային ռիսկի հաշվարկմանը նախորդող 250 աշխատանքային օրերի տվյալներից: Փոխարժեքների հաշվարկման համար հիմք պետք է ընդունել Կենտրոնական բանկի հայտարարած՝ Հայաստանի Հանրապետության դրամի նկատմամբ արտարժույթների փոխարժեքները, իսկ թանկարժեք մետաղների բանկային կամ ստանդարտացված ձուլակտորների և մետաղական հաշիվների համար՝ Կենտրոնական բանկի հայտարարած թանկարժեք մետաղների հաշվարկային գները:

- 4) Արտարժույթի յուրաքանչյուր տեսակի համար հաշվարկել տվյալ արտարժույթի՝ Հայաստանի Հանրապետության դրամի նկատմամբ Կենտրոնական բանկի կողմից հայտարարված արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքի տատանումների բնական լոգարիթմական մեծություններն՝ ըստ օրերի՝ համաձայն հետևյալ բանաձևի.

$$Ln (\Phi_o / \Phi_{o-1});$$

որտեղ՝

« Φ_o » – տվյալ արտարժույթի՝ Հայաստանի Հանրապետության դրամի նկատմամբ Կենտրոնական բանկի կողմից հայտարարված արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքն է՝ տվյալ օրվանից «O» օր առաջ,

«O» – արտարժութային ռիսկի հաշվարկման օրն է կամ դրան նախորդող 250 աշխատանքային օրերից մեկը:

- 5) Արտարժույթի յուրաքանչյուր տեսակի համար հաշվարկել տվյալ արտարժույթի՝ Հայաստանի Հանրապետության դրամի նկատմամբ Կենտրոնական բանկի հայտարարած փոխարժեքի տատանումների բնական լոգարիթմական մեծությունների (շարքի երկարությունը՝ 250 աշխատանքային օր) մաթեմատիկական սպասումը, որը հաշվարկվում է ըստ հետևյալ բանաձևի.

$$\bar{\Gamma}^r = \frac{1}{250} \sum_{o=1}^{250} Ln (\Phi^r_o / \Phi^r_{o-1})$$

որտեղ՝

« $\bar{\Gamma}^r$ » – «r»-րդ արտարժույթի տատանման բնական լոգարիթմական մեծությունների մաթեմատիկական սպասումն է,

$Ln (\Phi^r_o / \Phi^r_{o-1})$ – «r»-րդ արտարժույթի տատանման բնական լոգարիթմական մեծությունն է՝ ըստ օրերի:

- 6) Հաշվարկել արտարժույթների միջև բոլոր հնարավոր կովարիացիաների գործակիցները: Կովարիացիաների գործակիցների հիման վրա պետք է կառուցել արտարժութային «ԱՄԱ» չափանի կովարիացիոն մատրիցան, որտեղ «Ա»-ն արտարժույթների տեսակների քանակն է: Կովարիացիայի գործակիցը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{Կով}_{r,\sigma} = \frac{1}{250} \sum_{o=1}^{250} (Ln (\Phi^r_o / \Phi^r_{o-1}) - \bar{\Gamma}^r) (Ln (\Phi^\sigma_o / \Phi^\sigma_{o-1}) - \bar{\Gamma}^\sigma),$$

որտեղ՝

$\text{Կով}_{r,\sigma}$ - «r»-րդ և « σ »-րդ արտարժույթների միջև կովարիացիայի գործակիցն է,

«Ե^Ի», «Ե^Ժ», համապատասխանաբար, «Ի»-րդ և «Ժ»-րդ արտարժույթների մաթեմատիկական սպասումներն են՝ հաշվարկված սույն հավելվածի 14-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն:

- 7) ՎաՌ մեթոդաբանությամբ արտարժույթային ռիսկի հաշվարկման համար հիմք պետք է ընդունել 99% վստահության միջակայքը:
- 8) Տվյալ օրվա համար ներդրումային ընկերության արտարժույթային ՎաՌ-ը (այսուհետև՝ արտարժույթային օրական ՎաՌ) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{ՎաՌ} = 2.33 \sqrt{\text{Ռ} * \text{Կով} * \text{Ռ}^S},$$

որտեղ՝

«Ռ» – ներդրումային ընկերության արտարժույթային դիրքերի մատրիցան է,
 «Կով» – ներդրումային ընկերության արտարժույթային կովարիացիոն մատրիցան է,
 «Ռ^S» – ներդրումային ընկերության արտարժույթային դիրքերի տրանսպոնացված մատրիցան է:

- 9) ՎաՌ մեթոդաբանության համաձայն՝ ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև սահմանային հարաբերակցության՝ Ն1 նորմատիվի հաշվարկման նպատակով արտարժույթային ռիսկը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{Արտարժույթային ռիսկը} = 3 * \left(\text{առավելագույն (ՎաՌ}_{-10}; \text{Ռ} \cdot \frac{1}{\text{Ն}} \sum_{r=1}^{\text{Ն}} \text{ՎաՌ}_r) \right),$$

որտեղ՝

«ՎաՌ₋₁₀»-ը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա տասնօրյա ՎաՌ-ն է՝

$$\text{հաշվարկված հետևյալ բանաձևով՝ } \text{ՎաՌ}_{-10} = \sqrt{10} * \text{ՎաՌ}_{\text{Ն}},$$

«Ն» – հաշվետու ժամանակաշրջանի օրերի թիվն է,

«Ի» – հաշվետու ժամանակաշրջանի օրերն են,

«Չ» ընդունում է սույն հավելվածի աղյուսակ 1-ով սահմանված արժեքները՝ կախված այն բանից, թե հաշվետու ամսվա վերջին օրվան նախորդող 250 աշխատանքային օրերի ընթացքում քանի օր է փոխարժեքի փոփոխության պատճառով ներդրումային ընկերության օրական զուտ կորուստների մեծությունը գերազանցել տվյալ օրվա արտարժույթային ՎաՌ-ը:

Աղյուսակ 1

| Գերազանցող օրերի քանակը | Չ |
|-------------------------|-----|
| 4 և 4-ից փոքր | 3 |
| 5 | 3.4 |
| 6 | 3.5 |

| | |
|------------|------|
| 7 | 3.65 |
| 8 | 3.75 |
| 9 | 3.85 |
| 10 և ավելի | 4 |

(14-րդ կետը փոխվել է 10.01.12թ. թիվ 2 Ն որոշմամբ):

ԳԼՈՒԽ 3. Տոկոսադրույքի ռիսկի հաշվարկ

15. Տոկոսադրույքի ռիսկը հաշվարկվում է որպես տոկոսադրույքի հատուկ ռիսկի և ընդհանուր ռիսկի հանրագումար, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$SՌ = SՀՌ + SԸՌ$,

որտեղ՝

SՌ - տոկոսադրույքի ռիսկն է՝ ամսվա միջին օրական հաշվարկով,

SՀՌ - տոկոսադրույքի հատուկ ռիսկն է՝ ամսվա միջին օրական հաշվարկով,

SԸՌ - տոկոսադրույքի ընդհանուր ռիսկն է՝ ամսվա միջին օրական հաշվարկով:

16. Տոկոսադրույքի հատուկ և ընդհանուր ռիսկերը հաշվարկվում են շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և վաճառքի համար մատչելի, ինչպես նաև փոփոխվող տոկոսադրույքով մինչև մարման ժամկետը պահվող պարտքային արժեթղթերի նկատմամբ: Ընդ որում, պարտքային արժեթղթերը դիրքերի հաշվարկում ընդգրկվում են ընթացիկ շուկայական արժեքով:

(16-րդ կետը փոխվել է 10.01.12թ. թիվ 2 Ն որոշմամբ):

17. Սույն կանոնակարգի իմաստով՝ պարտքային արժեթղթերի թվին են դասվում.

- 1) պետական պարտքային արժեթղթեր և պետական մուրհակներ,
- 2) այլ պարտքային արժեթղթեր և մուրհակներ (բացառությամբ՝ փոխարկվող պարտքային արժեթղթերի, և այլ արժեթղթերի),
- 3) դեպոզիտային սերտիֆիկատներ,
- 4) ոչ փոխարկելի արտոնյալ բաժնետոմսեր,
- 5) բաժնային արժեթղթեր չհամարվող այն արժեթղթերը, որոնք պարունակում են տոկոսադրույքի ռիսկ:

18. Պարտքային արժեթղթերի դիրքերի հաշվարկում ընդգրկվում են նաև ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթերը, ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի վաճառքի արդյունքում ձևավորված հաշվեկշռային պարտավորությունները, փոխառությամբ տրամադրված արժեթղթերը, փոխառությամբ ստացված արժեթղթերի վաճառքի արդյունքում ձևավորված

հաշվեկշռային պարտավորությունները, գրավադրված պարտքային արժեթղթերը, ինչպես նաև այն հետհաշվեկշռային ածանցյալ գործիքները, որոնց հիմքում ընկած է պարտքային արժեթուղթ: Պարտքային արժեթղթերի դիրքերի հաշվարկում չեն ընդգրկվում ներդրումային ընկերության կողմից ռեպո համաձայնագրերով ձեռք բերված և փոխառությամբ ստացված պարտքային արժեթղթերը, որպես գրավ ստացված պարտքային արժեթղթերը, ինչպես նաև ներդրումային ընկերության կողմից արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող պարտքային արժեթղթերը, ինչպես նաև բրոքերային ծառայությունների շրջանակներում կառավարվող պարտքային արժեթղթերը:

(18-րդ կետը փոխվել է 10.01.12թ. թիվ 2 Ն, 27.11.12թ. թիվ 327 Ն որոշումներով):

19. Պարտքային արժեթղթերի դիրքը ներդրումային ընկերության պարտքային արժեթղթերի (ներառյալ՝ հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների հիմքում ընկած պարտքային արժեթղթերի) և որպես պարտավորություն հանդիսացող պարտքային արժեթղթերի (ներառյալ՝ հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների հիմքում ընկած պարտքային արժեթղթերի) մեծությունների տարբերությունն է: Պարտքային արժեթղթերի դիրքերը սահմանվում են.

- 1) երկար, եթե տարբերությունը մեծ է գրոյից,
- 2) կարճ, եթե տարբերությունը փոքր է գրոյից,
- 3) փակ, եթե տարբերությունը հավասար է գրոյի:

20. Պարտքային արժեթղթերի համախառն դիրքը հաշվարկվում է որպես պարտքային արժեթղթերի երկար և կարճ դիրքերի բացարձակ մեծությունների հանրագումար:

21. Տոկոսադրույքի ռիսկի հաշվարկման նպատակով պարտքային արժեթղթերի դիրքերը պետք է հաշվարկվեն սույն կետով սահմանված սկզբունքներով խմբավորված պարտքային արժեթղթերի նկատմամբ: Միևնույն դիրքերի հաշվարկին մասնակցող պարտքային արժեթղթերը պետք է.

- 1) թողարկված լինեն միևնույն անձի կողմից,
- 2) արտահայտված լինեն միևնույն արժույթով,
- 3) ունենան միևնույն եկամտաբերությունը, կամ եկամտաբերությունների միջև տարբերությունը չպետք է գերազանցի 0.2 տոկոսային կետը, և
- 4) մինչև մարումն ընկած ժամկետայնությունները պետք է բավարարեն հետևյալ պայմաններին.

ա. ունենան միևնույն ժամկետայնությունները, եթե մինչև մարումն ընկած ժամկետը փոքր կամ հավասար է մեկ ամսի,

բ. ժամկետայնությունների միջև տարբերությունը չպետք է գերազանցի 7 օրը, եթե վերջիններիս ժամկետայնությունը մեկից տասներկու ամիս է, կամ

գ. ժամկետայնությունների միջև տարբերությունը չպետք է գերազանցի 30 օրը, եթե ժամկետայնությունները մեկ տարուց ավելի են:

22. Տոկոսադրույքի ռիսկի հաշվարկի ընթացքում պարտքային արժեթղթերի՝ մինչև մարումներն ընկած ժամկետները հաշվարկվում են հետևյալ կերպ.

1) ֆիքսված տոկոսադրույք ունեցող պարտքային արժեթղթերի դեպքում հիմք է ընդունվում պարտքային արժեթղթերի՝ մինչև մարումն ընկած օրերի թիվը (մասնակի մարման արժեթղթերի դեպքում հիմք է ընդունվում յուրաքանչյուր մասնակի մարմանը մնացած օրերի թիվը),

2) փոփոխվող տոկոսադրույք ունեցող պարտքային արժեթղթերի դեպքում հիմք է ընդունվում տոկոսադրույքի առաջիկա վերանայմանը մնացած օրերի թիվը,

3) ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթերի դեպքում հիմք է ընդունվում պարտքային արժեթղթերի մինչև մարումն ընկած ժամկետայնությունը,

4) հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների հիմքում ընկած պարտքային արժեթղթերի դեպքում հիմք է ընդունվում ածանցյալ գործառնության՝ մինչև կատարումն ընկած ժամկետայնությունը:

ԳԼՈՒԽ 4. Տոկոսադրույքի հատուկ ռիսկի հաշվարկ

23. Տոկոսադրույքի հատուկ ռիսկի հաշվարկման նպատակով պարտքային արժեթղթերի դիրքերի հաշվարկն իրականացվում է սույն հավելվածի 21-րդ կետով սահմանված սկզբունքներով խմբավորված պարտքային արժեթղթերի նկատմամբ:

24. Դիրքերի հաշվարկից հետո հաշվարկվում է պարտքային արժեթղթերի համախառն դիրքը:

25. Համախառն դիրքի հաշվարկում պարտքային արժեթղթերը տարբերակված կշիռներով ընդգրկելու նպատակով դասակարգվում են հետևյալ դասերի.

1) պետական պարտքային արժեթղթեր՝ պետությունների/կառավարությունների, կենտրոնական բանկերի և տեղական ինքնակառավարման մարմինների պարտքային արժեթղթեր,

2) հուսալի պարտքային արժեթղթեր, որոնց թվին են դասվում սույն կանոնակարգի հավելված 1-ի աղյուսակ 1-ի 9-րդ կետով սահմանված՝ միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից թողարկված պարտքային արժեթղթերը, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների և օտարերկրյա բանկերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերի պարտքային արժեթղթերը, օտարերկրյա բանկի

կողմից թողարկված /ԲԲԲ-/Բաա3/ և ավելի բարձր վարկանիշ ունեցող պարտքային արժեթղթերը, օտարերկրյա ոչ բանկ կազմակերպության կողմից թողարկված /Ա-/Ա3/ և ավելի բարձր վարկանիշ ունեցող պարտքային արժեթղթերը, ինչպես նաև Կենտրոնական բանկի կողմից «Բ-» և ավելի բարձր վարկանիշ ստացած ոչ ֆինանսական կազմակերպությունների պարտքային արժեթղթերը:

3) այլ պարտքային արժեթղթեր, որոնք չեն դասվում պետական պարտքային և հուսալի պարտքային արժեթղթերի շարքին:

26. Համախառն դիրքի հաշվարկում պարտքային արժեթղթերի դիրքերն ընդգրկվում են սույն հավելվածի աղյուսակ 2-ի 4-րդ սյունակով սահմանված կշիռներով:

Աղյուսակ 2

| Պարտքային արժեթղթերի տեսակներ | Թողարկող/վարկանիշ | Մինչև մարումն ընկած ժամկետայնություն | Կշիռը (%) |
|--------------------------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--------------------------------------|-----------|
| (1) | (2) | (3) | (4) |
| 1. Պետական պարտքային արժեթղթեր | 1.1 Հայաստանի Հանրապետության դրամով Կենտրոնական բանկի թողարկած արժեթղթեր, Հայաստանի Հանրապետության պետական գանձապետական պարտքային արժեթղթեր, | < 1 տարի | 1 |
| | | ≥1 տարի, < 5 տարի | 2 |
| | 1.2 /ԱԱԱ/Աաա/-ից /ԱԱ-/Աա3/ վարկանիշ ունեցող օտարերկրյա կենտրոնական բանկերի, կառավարությունների, տեղական ինքնակառավարման մարմինների թողարկած պարտքային արժեթղթեր, | ≥ 5 տարի | 4 |
| | 1.3 Արտարժույթով Կենտրոնական բանկի թողարկած արժեթղթեր, Հայաստանի Հանրապետության պետական գանձապետական պարտքային | < 1 տարի | 2 |
| | | ≥1 տարի, < 5 տարի | 3 |

| | | | |
|--------------------------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----------------------------|----|
| | արժեթղթեր, 1.4 /Ա+/Ա1/-ից /ԲԲԲ-/Բաա3/ վարկանիշ ունեցող օտարերկրյա կենտրոնական բանկերի, կառավարությունների, տեղական ինքնակառավարման մարմինների թողարկած պարտքային արժեթղթեր, | ≥ 5 տարի | 6 |
| | 1.5 /ԲԲ+/Բա1/-ից /Բ-/Բ3/ վարկանիշ ունեցող օտարերկրյա կենտրոնական բանկերի, կառավարությունների, տեղական ինքնակառավարման մարմինների թողարկած պարտքային արժեթղթեր, | - | 8 |
| | 1.6 /Բ-/Բ3/-ից ցածր վարկանիշ ունեցող օտարերկրյա կենտրոնական բանկերի, կառավարությունների, տեղական ինքնակառավարման մարմինների թողարկած պարտքային արժեթղթեր, | - | 12 |
| | 1.7 Վարկանիշ չունեցող օտարերկրյա կենտրոնական բանկերի, կառավարությունների, տեղական ինքնակառավարման մարմինների թողարկած պարտատոմսեր | - | 8 |
| 2. Հուսալի պարտքային արժեթղթեր | | < 1 տարի | 2 |
| | | ≥ 1 տարի, < 5 տարի | 6 |
| | | ≥ 5 տարի | 12 |
| 3. Պարտքային այլ արժեթղթեր | | - | 20 |

27. Տոկոսադրույքի հատուկ ռիսկը հաշվարկվում է յուրաքանչյուր օրվա դրությամբ
և արտահայտվում Հայաստանի Հանրապետության դրամով:

28. Տոկոսադրույքի հատուկ ռիսկը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.
 $SՀՌ = (SՀՌ-1 + SՀՌ-2 + \dots + SՀՌ-Ն) / Ն, որտեղ`$

SՀՌ – տոկոսադրույքի հատուկ ռիսկն է՝ ամսվա միջին օրական հաշվարկով,

ՏՀՌ-1, ՏՀՌ-2, ..., ՏՀՌ-Ն – պարտքային արժեթղթերի համախառն դիրքն է՝ ըստ օրերի: Ընդ որում, համախառն դիրքի հաշվարկում պարտքային արժեթղթերի դիրքերը ընդգրկվում են սույն հավելվածի աղյուսակ 2-ի 4-րդ սյունակով սահմանված կշիռներով, «Ն» - հաշվետու ամսվա օրերի թիվն է:

29. Այն օրերին, երբ ներդրումային ընկերության հաշվեկշիռը փոփոխություններ չի կրել (ներառյալ՝ ոչ աշխատանքային օրերը), օրական տվյալների հաշվարկում ընդգրկվում են նախորդ օրվա տվյալները:

ԳԼՈՒԽ 5. Տոկոսադրույքի ընդհանուր ռիսկի հաշվարկ

30. Տոկոսադրույքի ընդհանուր ռիսկի հաշվարկման նպատակով պարտքային արժեթղթերի դիրքերի հաշվարկն իրականացվում է սույն հավելվածի 21-րդ կետով սահմանված սկզբունքներով դասակարգված պարտքային արժեթղթերի նկատմամբ: Ընդ որում, պարտքային արժեթղթերի համախառն գուտ դիրքը հաշվարկվում է որպես պարտքային արժեթղթերի երկար դիրքերի հանրագումարի և կարճ դիրքերի հանրագումարի (բացարձակ մեծությամբ) տարբերություն:

31. Պարտքային արժեթղթերի դիրքերի հաշվարկից հետո պարտքային արժեթղթերի երկար կամ կարճ դիրքերը բաշխվում են սույն հավելվածի 3-րդ աղյուսակի 4-րդ սյունակով սահմանված՝ մինչև մարումը ընկած ժամանակաշրջաններում՝ համապատասխան կշիռներով.

32.

Աղյուսակ 3

| Ժամկետային գոտիներ | N | Պարտքային արժեթղթերի մինչև մարումը ընկած ժամանակաշրջաններ | Կշիռ (%) |
|--------------------|-----|-----------------------------------------------------------|----------|
| (1) | (2) | (3) | (4) |
| 1-ին գոտի | 1 | մինչև մեկ ամիս | 0 |
| | 2 | 1-ից մինչև 3 ամիս | 0.5 |
| | 3 | 3-ից մինչև 6 ամիս | 1 |
| | 4 | 6-ից մինչև 12 ամիս | 2 |
| 2-րդ գոտի | 5 | 1-ից մինչև 2 տարի | 3 |

| | | | |
|-----------|----|---------------------|----|
| | 6 | 2-ից մինչև 3 տարի | 4 |
| | 7 | 3-ից մինչև 4 տարի | 6 |
| 3-րդ գոտի | 8 | 4-ից մինչև 5 տարի | 7 |
| | 9 | 5-ից մինչև 7 տարի | 8 |
| | 10 | 7-ից մինչև 10 տարի | 10 |
| | 11 | 10-ից մինչև 15 տարի | 11 |
| | 12 | 15-ից մինչև 20 տարի | 13 |
| | 13 | 20 տարի և ավելի | 15 |

(Աղյուսակ 3-ը փոխվել է 10.01.12թ. թիվ 2 Ն որոշմամբ):

33. Պարտքային արժեթղթերի դիրքերը սույն հավելվածի աղյուսակ 3-ի 4-րդ սյունակում սահմանված կշիռներով հաշվարկելուց հետո հաշվարկվում են սույն հավելվածի 34-39-րդ կետերով սահմանված մեծությունները:

34. Աղյուսակ 3-ով սահմանված՝ մինչև մարումն ընկած յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար պարտքային արժեթղթերի նվազագույն դիրքը տվյալ ժամանակաշրջանի բոլոր երկար դիրքերի հանրագումարի և կարճ դիրքերի հանրագումարի (բացարձակ մեծությամբ) նվազագույն մեծությունն է:

35. Աղյուսակ 3-ով սահմանված՝ մինչև մարումն ընկած յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար պարտքային արժեթղթերի գուտ դիրքը (երկար կամ կարճ) տվյալ ժամանակաշրջանի բոլոր երկար դիրքերի հանրագումարի և կարճ դիրքերի հանրագումարի (բացարձակ մեծությամբ) տարբերությունն է:

36. Աղյուսակ 3-ով սահմանված յուրաքանչյուր ժամանակային գոտու համար պարտքային արժեթղթերի նվազագույն դիրքը տվյալ ժամանակային գոտու ժամանակաշրջանների պարտքային արժեթղթերի երկար գուտ դիրքերի հանրագումարի և պարտքային արժեթղթերի կարճ գուտ դիրքերի հանրագումարի (բացարձակ մեծությամբ) նվազագույն մեծությունն է:

37. Աղյուսակ 3-ով սահմանված յուրաքանչյուր ժամանակային գոտու համար պարտքային արժեթղթերի գուտ (երկար կամ կարճ) դիրքը տվյալ ժամանակային գոտու ժամանակաշրջանների պարտքային արժեթղթերի երկար գուտ դիրքերի հանրագումարի և պարտքային արժեթղթերի կարճ գուտ դիրքերի հանրագումարի տարբերությունն է:

38. Աղյուսակ 3-ով սահմանված առաջին և երկրորդ գոտիների միջև նվազագույն դիրքը առաջին գոտու երկար գուտ (կամ կարճ) դիրքի (բացարձակ մեծությամբ) և երկրորդ գոտու կարճ գուտ (կամ երկար) դիրքի (բացարձակ մեծությամբ) նվազագույն մեծությունն է:

39. Աղյուսակ 3-ով սահմանված երկրորդ և երրորդ գոտիների միջև նվազագույն դիրքը ներքոհիշյալ մեծություններից նվազագույնն է.

1) (երկրորդ գոտու գուտ դիրք (բացարձակ մեծությամբ)) - (առաջին և երկրորդ գոտիների միջև նվազագույն դիրք),

2) երրորդ գոտու գուտ դիրք (բացարձակ մեծությամբ):

40. Աղյուսակ 3-ով սահմանված առաջին և երրորդ գոտիների միջև նվազագույն դիրքը ներքոհիշյալ մեծություններից նվազագույնն է.

1) (առաջին գոտու գուտ դիրք (բացարձակ մեծությամբ)) – (առաջին և երկրորդ գոտիների միջև նվազագույն դիրք),

2) (երրորդ գոտու գուտ դիրք (բացարձակ մեծությամբ)) – (երկրորդ և երրորդ գոտիների միջև նվազագույն դիրք):

41. Տոկոսադրույքի ընդհանուր ռիսկը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$SԸՌ = (SԸՌ-1 + SԸՌ-2 + \dots + SԸՌ-Ն) / Ն,$$

որտեղ՝

SԸՌ – տոկոսադրույքի ընդհանուր ռիսկն է՝ ամսվա միջին օրական հաշվարկով,

SԸՌ-1, SԸՌ-2, ..., SԸՌ-Ն – տոկոսադրույքների ընդհանուր ռիսկերն են՝ ըստ օրերի,

«Ն» - հաշվետու ամսվա օրերի թիվն է:

42. Տվյալ օրվա տոկոսադրույքի ընդհանուր ռիսկը ներքոհիշյալ մեծությունների հանրագումարն է.

1) մինչև մարումն ընկած յուրաքանչյուր ժամանակաշրջանի նվազագույն դիրքի 10 տոկոս,

2) առաջին գոտու նվազագույն դիրքի 40 տոկոս,

3) երկրորդ գոտու նվազագույն դիրքի 30 տոկոս,

4) երրորդ գոտու նվազագույն դիրքի 30 տոկոս,

5) առաջին և երկրորդ գոտիների միջև նվազագույն դիրքի 40 տոկոս,

6) երկրորդ և երրորդ գոտիների միջև նվազագույն դիրքի 40 տոկոս,

7) առաջին և երրորդ գոտիների միջև նվազագույն դիրքի 150 տոկոս,

8) պարտքային արժեթղթերի համախառն գուտ դիրքի 100 տոկոս:

43. Այն օրերին, երբ ներդրումային ընկերության հաշվեկշիռը փոփոխություններ չի կրել (ներառյալ՝ ոչ աշխատանքային օրերը), օրական տվյալների հաշվարկում ընդգրկվում են նախորդ օրվա տվյալները:

ԳԼՈՒԽ 6. Բաժնային արժեթղթերի գնային ռիսկի հաշվարկ

44. Բաժնային արժեթղթերի համար հիմք է ընդունվում ՀՀՍՍ 39-ում տրված սեփական կապիտալի գործիքների սահմանումը:

(44-րդ կետը փոխվել է 10.01.12թ. թիվ 2 Ն որոշմամբ):

45. Բաժնային արժեթղթերի գնային ռիսկը հաշվարկվում է շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և վաճառքի համար մատչելի բաժնային արժեթղթերի նկատմամբ:

(45-րդ կետը փոխվել է 10.01.12թ. թիվ 2 Ն որոշմամբ):

46. Սույն հավելվածի իմաստով բաժնային արժեթղթերի թվին են դասվում.

- 1) բաժնետոմսեր (բացառությամբ՝ ոչ փոխարկելի արտոնյալ բաժնետոմսերի),
- 2) իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում բաժնեմասի, անդամակցության կամ մնացած այլ մասնակցության իրավունք տվող այլ արժեթղթեր,
- 3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված արժեթղթերի փոխարկվող պարտքային արժեթղթեր և այլ արժեթղթեր,
- 4) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված արժեթղթերին բաժանորդագրվելու կամ այն գնելու օպցիոն կամ այլ համաձայնություն (իրավունք),
- 5) այլ ֆինանսական գործիքներ, որոնք կարող են ճանաչվել որպես բաժնային արժեթղթեր:

47. Բաժնային արժեթղթերի դիրքերի հաշվարկում ընդգրկվում են նաև ռեպո համաձայնագրերով վաճառված բաժնային արժեթղթերը, ռեպո համաձայնագրերով ձեռք բերված բաժնային արժեթղթերի վաճառքի արդյունքում ձևավորված հաշվեկշռային պարտավորությունները, փոխառությամբ տրամադրված բաժնային արժեթղթերը, փոխառությամբ ստացված բաժնային արժեթղթերի վաճառքի արդյունքում ձևավորված պարտավորությունները, գրավադրված բաժնային արժեթղթերը, ինչպես նաև այն հետհաշվեկշռային ածանցյալ գործիքները, որոնց հիմքում ընկած են սույն հավելվածի 46-րդ կետով սահմանված բաժնային արժեթղթերը: Բաժնային արժեթղթերի դիրքերի հաշվարկում չեն ընդգրկվում ռեպո համաձայնագրերով ձեռք բերված և փոխառությամբ ստացված բաժնային արժեթղթերը, որպես գրավ ստացված բաժնային արժեթղթերը, ինչպես նաև ներդրումային ընկերության կողմից արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող բաժնային արժեթղթերը, ինչպես նաև բրոքերային ծառայությունների շրջանակներում կառավարվող բաժնային արժեթղթերը:

(47-րդ կետը փոխվել է 10.01.12թ. թիվ 2 Ն, 27.11.12թ. թիվ 327 Ն որոշումներով):

48. Բաժնային արժեթղթերի գնային ռիսկի հաշվարկման նպատակով բաժնային արժեթղթերի դիրքերը պետք է հաշվարկվեն սույն կետով սահմանված սկզբունքներով խմբավորված բաժնային արժեթղթերի նկատմամբ: Միևնույն դիրքերի հաշվարկում մասնակցող բաժնային արժեթղթերը պետք է.

- 1) թողարկված լինեն միևնույն անձի կողմից,
- 2) թողարկված լինեն միևնույն արժույթով:

49. Բաժնային արժեթղթերի դիրքը, որպես ակտիվ հանդիսացող բաժնային արժեթղթերի (ինչպես նաև հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների հիմքում ընկած բաժնային արժեթղթերի) և որպես պարտավորություն հանդիսացող բաժնային արժեթղթերի (ներառյալ՝ հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների հիմքում ընկած բաժնային արժեթղթերի) մեծությունների տարբերությունն է: Բաժնային արժեթղթերի դիրքերը սահմանվում են՝

- 1) երկար, եթե տարբերությունը մեծ է զրոյից,
- 2) կարճ, եթե տարբերությունը փոքր է զրոյից,
- 3) փակ, եթե տարբերությունը հավասար է զրոյի:

50. Բաժնային արժեթղթերի համախառն դիրքը հաշվարկվում է որպես բաժնային արժեթղթերի տարբեր դիրքերի (երկար և կարճ) բացարձակ մեծությունների հանրագումար:

51. Բաժնային արժեթղթերի համախառն զուտ դիրքը հաշվարկվում է որպես բաժնային արժեթղթերի երկար դիրքերի հանրագումարի և կարճ դիրքերի հանրագումարի (բացարձակ մեծությամբ) միջև տարբերություն:

52. Բաժնային արժեթղթերը դիրքերի հաշվարկում ընդգրկվում են ընթացիկ շուկայական արժեքով:

53. Բաժնային արժեթղթերի դիրքերը հաշվարկվում են յուրաքանչյուր օրվա դրությամբ և արտահայտվում Հայաստանի Հանրապետության դրամով:

54. Բաժնային այն արժեթղթերը, որոնք նվազեցվել են հիմնական կապիտալի հաշվարկից, չեն ընդգրկվում բաժնային արժեթղթերի դիրքերի հաշվարկում:

55. Բաժնային արժեթղթերի դիրքերի հաշվարկն իրականացվում է սույն հավելվածի 48-րդ կետով սահմանված սկզբունքներով դասակարգված բաժնային արժեթղթերի նկատմամբ:

56. Բաժնային արժեթղթերի գնային ռիսկը բաժնային արժեթղթերի գնային ընդհանուր ռիսկի և բաժնային արժեթղթերի գնային հատուկ ռիսկի հանրագումարն է, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ԲԱԳՌ = (ԸՌ_1 + ԸՌ_2 + \dots + ԸՌ_ν) / Ն + (ՀՌ_1 + ՀՌ_2 + \dots + ՀՌ_ν) / Ն,$$

որտեղ՝

ԲԱԳՌ - բաժնային արժեթղթերի գնային ռիսկն է՝ ամսվա միջին օրական հաշվարկով,

ԸՌ-1, ԸՌ-2, ..., ԸՌ-Ն – բաժնային արժեթղթերի գնային ընդհանուր ռիսկն է՝ ըստ օրերի,

ՀՌ-1, ՀՌ-2, ..., ՀՌ-Ն -բաժնային արժեթղթերի գնային հատուկ ռիսկն է՝ ըստ օրերի,

«Ն» - հաշվետու ամսվա օրերի թիվն է:

57. Տվյալ օրվա համար բաժնային արժեթղթերի գնային ընդհանուր ռիսկը հավասար է տվյալ օրվա բաժնային արժեթղթերի համախառն զուտ դիրքի 8 տոկոսի բացարձակ մեծությանը:

58. Տվյալ օրվա բաժնային արժեթղթերի գնային հատուկ ռիսկը հավասար է տվյալ օրվա բաժնային արժեթղթերի համախառն դիրքին՝ հաշվարկված սույն հավելվածի 60-րդ կետի կշիռներով:

59. Համախառն դիրքի հաշվարկում բաժնային արժեթղթերի տարբերակված կշիռներով ընդգրկելու նպատակով դասակարգվում են հետևյալ դասերի.

1) իրացվելի և դիվերսիֆիկացված բաժնային արժեթղթերի,

2) այլ բաժնային արժեթղթերի:

60. Բաժնային արժեթղթերը դասվում են իրացվելի և դիվերսիֆիկացված բաժնային արժեթղթերի շարքին, եթե միաժամանակ բավարարվել են հետևյալ պայմանները.

1) Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկի, վարկային կազմակերպության կամ այլ ֆինանսական կազմակերպության բաժնային արժեթուղթ է կամ /ԲԲԲ-/Բաա3/ և ավելի բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա բանկի բաժնային արժեթուղթ, որը մտնում է սույն կանոնակարգի հավելված 1-ի 29-րդ կետի աղյուսակով սահմանվող որևէ բորսայական ինդեքսի մեջ, կամ Կենտրոնական բանկի կողմից «Գ-» և ավելի բարձր վարկանիշ ստացած ոչ ֆինանսական կազմակերպության բաժնային արժեթուղթ է, կամ /Ա-/Ա3/ և ավելի բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա ոչ բանկ կազմակերպության բաժնային արժեթուղթ, որը մտնում է սույն կանոնակարգի հավելված 1-ի 29-րդ կետի աղյուսակով սահմանվող որևէ բորսայական ինդեքսի մեջ,

2) բաժնային արժեթղթի դիրքը (կարճ կամ երկար) չի գերազանցում բաժնային արժեթղթերի համախառն դիրքի 10 տոկոսը:

61. Բաժնային արժեթղթերի գնային հատուկ ռիսկի հաշվարկման ընթացքում համախառն դիրքի հաշվարկում բաժնային արժեթղթերի դիրքերը (բացարձակ մեծությամբ) մտնում են հետևյալ կշիռներով.

ա) սույն հավելվածի 59-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված բաժնային արժեթղթերի շարքին դասվող բաժնային արժեթղթերի դիրքերը՝ 4 տոկոս,

բ) սույն հավելվածի 59-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված բաժնային արժեթղթերի շարքին դասվող բաժնային արժեթղթերի դիրքերը՝ 8 տոկոս:

62. Այն օրերին, երբ ներդրումային ընկերության հաշվեկշիռը փոփոխություններ չի կրել (ներառյալ՝ ոչ աշխատանքային օրերը), օրական տվյալների հաշվարկում ընդգրկվում են նախորդ օրվա տվյալները:

Հավելված 3

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2009 թվականի հուլիսի 28-ի թիվ 231-Ն որոշմամբ հաստատված Կանոնակարգ 4/02-ի

Գործառնական ռիսկի հաշվարկ

1. Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև սահմանային հարաբերակցության՝ Ն1 նորմատիվի հաշվարկում ընդգրկելու նպատակով գործառնական ռիսկը հաշվարկվում է հիմնական բնութագրիչների մոտեցման համաձայն:

2. Հիմնական բնութագրիչների մոտեցման համաձայն՝ գործառնական ռիսկը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ԳՌ = (ՁԵ_s * Գ + ՁԵ_{s-1} * Գ + ՁԵ_{s-2} * Գ) / Ն,$$

որտեղ՝

ԳՌ - հիմնական բնութագրիչների մոտեցման համաձայն հաշվարկված գործառնական ռիսկն է,

ΣE_s - ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև սահմանային հարաբերակցության՝ Ն1 նորմատիվի հաշվարկմանը նախորդող տարվա հունվարից դեկտեմբերն ընկած տարվա (այսուհետև՝ հաշվետու տարի) զուտ եկամուտն է,

ΣE_{s-1} - ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև սահմանային հարաբերակցության՝ Ն1 նորմատիվի հաշվարկմանը նախորդող 2-րդ հաշվետու տարվա զուտ եկամուտն է,

ΣE_{s-2} - ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև սահմանային հարաբերակցության՝ Ն1 նորմատիվի հաշվարկմանը նախորդող 3-րդ հաշվետու տարվա զուտ եկամուտն է,

«Գ» = 15%,

«Ն» - վերջին երեք տարիներից 0-ից բարձր զուտ եկամուտ ունեցած տարիների թիվն է:

3. Եթե որևէ տարվա զուտ եկամուտը փոքր է 0-ից, ապա տվյալ տարվա զուտ եկամուտը չի ընդգրկվում գործառնական ռիսկի հաշվարկում:

4. Եթե հաշվետու ամսվան նախորդող երեք տարիներից յուրաքանչյուրում ներդրումային ընկերության զուտ եկամուտները փոքր կամ հավասար են եղել 0-ի, ապա տվյալ տարվա ընթացքում գործառնական ռիսկը չի հաշվարկվում:

5. Տվյալ տարվա զուտ եկամուտը հաշվարկվում է որպես ներդրումային ծառայությունների և ոչ հիմնական ծառայությունների մատուցման դիմաց ստացված եկամուտների հանրագումար: Տվյալ տարվա զուտ եկամտի հաշվարկին չեն մասնակցում արժեթղթերի իրացումից ստացված շահույթը/վնասը, ինչպես նաև որպես փոխհատուցում ստացված ապահովագրական եկամուտները:

(5-րդ կետը փոխվել է 10.01.12թ. թիվ 2 Ն որոշմամբ):

